Ազգ Azg
21 ՅՈՒՆԻՍ 2011 ԵՐԵՔՇԱԲԹԻ 113(4732)
ISSN: 1829-1651

# 78-ամյա պատրիարքի «բաց հորդորը» 60-ամյա կաթողիկոսին

## Երբ տարիքը դառնա իմաստություն...

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**Վրաստանում, երբ որեւէ նշանակալի իրադարձություն պետք է տեղի ունենա, քաղաքական այրերը, սեփական երեսուն ու մի քիչ տարիների ընթացքում առանձնակի բան չտեսած, բայց իշխանական լծակներին տիրանալուց տեղ ու արժեք մոռացած, մի բան շատ են կարեւորում. հաջողության համար պետք է ունենալ վրաց պատրիարք Իլյա Երկրորդի օրհնությունը: Դրա համար էլ քաղաքական դերակատարներն անգամ շտապում են վրաց պատրիարքի մոտ՝ նրա աջակցությունը վայելողի նման վրացական հասարակությանը ներկայանալու հեռանկարով:**

**Ու թերեւս դա էլ վրաց պատրիարքի՝ բոլորին իր աջակցությունն աղերսողի դիրքում տեսնելու սովորությունն է ձեւավորել, այլապես դժվար է հասկանալ 78-ամյա պատրիարքի՝ տարիքից ելնելով մարդկանց գնահատականներ տալու ոչ կոռեկտ մոտեցումը, մոռանալով նույն վրացական հասարակության մեջ տարածված խոսքերը, որ շնորհալի մարդուն է միայն տարիքը շնորհք ավելացնում, իսկ ապաշնորհության դեպքում տարիներն ու փորձառությունը մի բան էլ ի հայտ են բերում ամենածածուկ ու տգեղ դրսեւորումները:**



**Հայկական եկեղեցու հետ ունեցած խնդիրները, որ վերաբերում են որոշ եկեղեցիների սեփականությանն ու իրավական կարգավիճակին, ավելի շատ ժամանակ կպահանջեն: Civil Georgia կայքէջի համաձայն, վրաց պատրիարք Իլյա Երկրորդն այսպես է արտահայտվել հունիսի 19-ին Թբիլիսիի Ս. Երրորդություն եկեղեցում տեղի ունեցած պատարագից հետո՝ անդրադառնալով հունիսի 10-15-ը Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի այցելությանը Վրաստան:**

*Տես էջ 2*

# Կազանից առաջ՝ ստրասբուրգյան եւ բրյուսելյան ուղերձների ակնկալիքով

Երեկ Ստրասբուրգում մեկնարկած Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի նստաշրջանում այս անգամ ընդգծված երկու հիմնական ելույթներից մեկը կներկայացնի Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը: Ըստ պաշտոնական հաղորդագրության, նախագահ Սարգսյանը այսօր աշխատանքային այցով կմեկնի Ստրասբուրգ՝ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) լիագումար նիստին մասնակցելու նպատակով:

Արդեն իսկ ադրբեջանական եւ թուրքական պատվիրակները ԵԽԽՎ-ում հարցեր են պատրաստել ու հերթագրվել ուղղելու Հայաստանի նախագահին, չնայած բավականին կանխատեսելի է լինելու այդ հարցերի բովանդակությունը: Մասնավորապես, ամեն առիթով ԵԽԽՎ-ում ադրբեջանական ու թուրքական պատվիրակների կողմից Ադրբեջանի «օկուպացման», միլիոնավոր «փախստականների» հարցն է տրվելու՝ «ե՞րբ եք զինուժը դուրս բերելու» հարցադրման համատեքստում:

Ամեն դեպքում, բացի լիագումար նիստում ներկայացնելիք ելույթից՝ այցի շրջանակում նախատեսված են նաեւ հանդիպումներ Եվրոխորհրդի մի շարք բարձրաստիճան պաշտոնյաների եւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախագահի հետ:

ԵԽԽՎ-ն ամառային այս նստաշրջանում կքննարկի 2012-2013 թթ. սեփական բյուջեն ու առաջնահերթությունները, Խորհրդարանական վեհաժողովի բարեփոխման հարցերը, հունիսի 21-ին կլսի Ուկրաինայի նախագահի ելույթը, իսկ հունիսի 22-ին՝ Երեւանի ժամանակով ժամը 15-ին նախատեսված է Սերժ Սարգսյանի ելույթը: Խորհրդարանական վեհաժողովն, ի շարս այլ հարցերի, կանդրադառնա նաեւ Սիրիայում եւ Լիբիայում տիրող իրավիճակին:

Հետաքրքրական է, որ ԵԽԽՎ օրակարգի նախնական տարբերակում ելույթ պետք է ունենար նաեւ Պաղեստինի ինքնավարության նախագահ Մահմուդ Աբբասը, սակայն օրակարգի հաստատված՝ վերջնական տարբերակում այդ ելույթը չկա:

Ստրասբուրգից Հայաստանի նախագահը Երեւան կվերադառնա հունիսի 22-ի երեկոյան, իսկ հունիսի 24-ին արդեն աշխատանքային այցով կմեկնի Կազան: Կազանում Ռուսաստանի Դաշնության նախագահ Դմիտրի Մեդվեդեւի նախաձեռնությամբ տեղի կունենա եռակողմ հանդիպում Հայաստանի, Ռուսաստանի եւ Ադրբեջանի նախագահների միջեւ՝ նվիրված Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորմանը:

Հենց այս իրադարձությունն էլ եւս մեկ անգամ կարեւորում է այն բոլոր ուղերձները, որ Հայաստանի նախագահը կներկայացնի Ստրասբուրգում ԵԽԽՎ ամբիոնից: Եվ եթե հաշվի առնենք, որ հունիսի 22-ին էլ բրյուսելյան հանդիպումների շարք կունենա Ադրբեջանի նախագահ Ալիեւ կրտսերը, տրամաբանական է ակնկալել, որ Կազանի հանդիպումից առաջ ինչպես Հայաստանի, այնպես էլ Ադրբեջանի նախագահները որոշ բան, այնուամենայնիվ, կասեն:

Այս հանդիպումը կարող է դառնալ շրջադարձային, ինչը ներկա դրությամբ մեծապես կարելի է կախված համարել Ադրբեջանի հաստատակամությունից, քանի որ վերջին մի քանի ստորագրված փաստաթղթերից, եթե ճար ունենար, Ադրբեջանը մեծագույն ցանկությամբ կհրաժարվեր: Այս համատեքստում դժվար է վստահ լինել, որ այս անգամ էլ Ադրբեջանը նախ կստորագրի, հետո նոր միայն կփոշմանի:

Ա. Հ.

# Ահմադինեժադը զանգահարեց Բաքու եւ Երեւան

Երեկ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը հեռախոսազրույց է ունեցել Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադի հետ: Ինչպես տեղեկանում ենք ՀՀ նախագահի պաշտոնական կայքէջից, հեռախոսազրույցը տեղի է ունեցել իրանական կողմի նախաձեռնությամբ: Հայաստանի եւ Իրանի նախագահները քննարկել են երկկողմ հարաբերությունների զարգացմանն ու փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող մի շարք ոլորտներում համագործակցության ակտիվացմանը վերաբերող հարցեր, նաեւ անդրադարձել տարածաշրջանային զարգացումներին ու փոխգործակցությանը:

Ինչպես տեղեկանում ենք Ադրբեջանի նախագահի պաշտոնական կայքէջից, հունիսի 19-ին, կրկին իրանական կողմի նախաձեռնությամբ՝ տեղի է ունեցել Ահմադինեժադ-Ալիեւ հեռախոսազրույցը: Այս դեպքում էլ երկու նախագահները քննարկել են «երկկողմ հարաբերությունների վերաբերյալ հարցեր», ինչպես նաեւ հարցեր՝ «տարածաշրջանային անվտանգության ու ահաբեկչության դեմ պայքարի վերաբերյալ»:

Հ. Ա.

# Հայի փոխարեն հայկական հարցի երկու մասնագետ Թուրքիայի ազգային մեծ ժողովում

**Թուրքիայի ազգային մեծ ժողովի հունիսի 12-ի ընտրությունների արձագանքները դեռեւս շարունակվում են ինչպես երկրում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Այդ ընթացքում աստիճանաբար իրենց մանդատն են ստանում նորընտիր պատգամավորները: Թեեւ ընտրություններում որեւէ թուրքահայ թեկնածու պատգամավոր չառաջադրվեց, ուստի ընտրվել չէր կարող, սակայն «Ջիհան» լրատվական գործակալության վկայությամբ, պատգամավոր է ընտրվել հայկական հարցի երկու մասնագետ:**

**Առաջինը Անկարայի համալսարանի լեզվի, պատմության եւ աշխարհագրության ֆակուլտետի դասախոս, պրոֆ. Սեյիթ Սերթչելիքն է, առաջադրված վարչապետ Էրդողանի «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցությունից: Մյուսը «Գորշ գայլերի» քաղաքական կազմակերպության՝ Ազգայնական շարժում կուսակցության անդամ, Թուրքական պատմական ընկերության նախկին նախագահ, պրոֆ. Յուսուֆ Հալաչօղլուն է:**

**Հալաչօղլուն հայտնի է մեր հասարակությանը: Ինչ վերաբերում է Սերթչելիքին, ապա նա, «Ջիհանի» իրազեկմամբ, իր դոկտորականը պատրաստել է Ռուսաստանում՝ օգտվելով Մոսկվայի եւ Սանկտ Պետերբուրգի արխիվներից եւ հայերենին տիրապետող միակ թուրք պատմաբանն է: Նրա «Հայկական հարցի ծագումը՝ ըստ ռուսական եւ հայկական աղբյուրների 1678-1914» վերնագրով աշխատությունը 2009-ին թուրքերեն եւ անգլերեն հրատարակել է Թուրքիայի ազգային մեծ ժողովը: «Ջիհանը» նշում է, որ հայկական հարցի մասին Սերթչելիքն ունի 1914-18 թթ. ընդգրկող նոր աշխատություն, որի հրատարակումը նախընտրական քարոզարշավի պատճառով ժամանակավորապես հետաձգվել է:**

Հ. Չ.

# Չավուշօղլուի «կամուրջներն» ու բոյկոտված ենթահանձնաժողովը

**Թուրքիայում հունիսի 12-ի խորհրդարանական ընտրություններից հետո էլ իշխանության ղեկին մնացած «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության տարբեր մակարդակի ներկայացուցիչներ համակարծության պակաս ունեն: Այն ժամանակ, երբ թուրքական «Hurriyet Daily News»-ը, վկա բերելով դիվանագիտական սեփական աղբյուրներին, ներկայացնում է, թե Թուրքիան առանձնակի մեծ հույսեր չի կապում Կազանում հունիսի 24-ին տեղի ունենալիք Հայաստանի, Ադրբեջանի եւ Ռուսաստանի նախագահների հանդիպման հետ, Թուրքիայի իշխող կուսակցությունը ներկայացնող, ԵԽԽՎ նախագահ Մեվլութ Չավուշօղլուն Կազանի հանդիպման արդյունքներից է «կախել» հայ-թուրքական հարաբերությունների հեռանկարը:**

**Խորհրդարանական վեհաժողովի երեկվա մեկնարկին տված ասուլիսում Չավուշօղլուն հայտարարել է, թե Թուրքիայի վարչապետն առաջ է քաշել մի քանի պայման, որոնց բավարարման դեպքում միայն հայ-թուրքական արձանագրությունները կվավերացվեն թուրքական խորհրդարանում: Իսկ այդ պայմանները հենց առնչվում են Կազանում ղարաբաղյան թեմայով կայանալիք հանդիպմանը, քանի որ ըստ էության Ադրբեջանին բավարարելու համար առաջ քաշված պահանջներ են՝ ազատելու «գոնե մի երկու շրջան»՝ հարակից Լեռնային Ղարաբաղին:**

**«Ա1+»-ի՝ Ստրասբուրգում գտնվող թղթակցի հարցին, թե կազանյան հանդիպումից առաջ որքանով էր նպատակահարմար ԼՂՀ խնդրով զբաղվող ԵԽԽՎ ենթահանձնաժողովի գործունեության վերակենդանացումը, Չավուշօղլուն պատասխանել է, որ այդ ենթահանձնաժողովի գործունեությունը միտված չէ բանակցային գործընթացին խոչընդոտելուն, նաեւ պայմանավորված չէ իր գործոնով. «Ենթահանձնաժողովի գործունեությունը ես չեմ նախաձեռնել, դա ԵԽ-ի նախաձեռնությունն է, նախագահ Ռասել Ջոնսթոնի ժամանակվանից»:**

**Մինչդեռ ԵԽԽՎ-ում հայկական պատվիրակությունը հրաժարվում է մասնակցել ԼՂՀ խնդրով զբաղվող ենթահանձնաժողովի գործունեությանը:**

**Հայկական պատվիրակության ղեկավար Դավիթ Հարությունյանն ընդգծել է, որ իմաստ չունի մասնակցելու եւ լսելու բազմիցս լսված անհիմն մեղադրանքներ եւ ուղղակի պրոպագանդա: «Դա մենք բավարար լսում ենք այստեղ նիստի ժամանակ»:**

*Տես էջ 2*

# «Մանկատների բեռնաթափման» Արմենական-ՌԱԿ-ի կողմից նոր ծրագիր է մշակվել

Ընտանեկան ամրությունը յուրաքանչյուր պետության ամրությունն է, իսկ մեր երկրի համար առավել կարեւոր նշանակություն ունի ամուր, կայուն ընտանիքների ձեւավորումը: Յուրաքանչյուր օջախում մանկան ծնունդը երջանիկ ընտանիքի գրավականն է: Իսկ երեխաներին անհոգ մանկություն պարգեւելու համար, այն էլ ներկա սոցիալական ծանր ու դժվարին պայմաններում, օր առաջ անհրաժեշտ է պետական մարմինների եւ հասարակության լուրջ ու շարունակական ուշադրությունը: Մանավանդ որ կան այնպիսիք, ովքեր իրենց երեխաներին հանձնում են մանկատուն, ժամանակավոր կացարաններ, կամ էլ դրդում մուրացկանության:

Մեր երկրում գործող մանկատներում կա շուրջ 4900 երեխա պետության խնամքի տակ:

Մանկատներում գտնվողները մշտապես երազում են վերադառնալ ընտանիք ու վայելել մայրական ջերմությունը: Ցավոք, դա բոլորին չի հաջողվում, չնայած որ կառավարությունը հատուկ որոշում է կայացրել



ու իրականացնում է «Մանկատների բեռնաթափում» ծրագիրը, որոշակի գումար տրամադրելով այն ընտանիքներին, որոնք խնամակալության կվերցնեն մանկատան երեխայի:

Մանկատներում, իրենց կամքից զատ, հայտնված երեխաների խնդիրները լրջորեն հետազոտել եւ ուսումնասիրել է Արմենական-ՌԱԿ Լոռու մարզի վարչությունը, որի կազմակերպմամբ շաբաթ օրը, հունիսի 18-ին, կուսակցության Վանաձորի տարածքային գրասենյակում կայացավ «Մանկատների բեռնաթափում» շատ կարեւոր քննարկումը, որին մասնակցում էր կուսակցության հանրապետական վարչությունը՝ Հակոբ Ավետիքյանի գլխավորությամբ:

*Տես էջ 3*

ԱԶԳ **Ընթացիկ**

# Ինքնասպաններին զրկե՛ք խորհրդանիշից

Ստեպ-ստեպ լսում ենք, թե Կիեւյան կամրջից ինքնասպան է նետվել: Կիեւյան կամուրջը դարձել է ինքնասպանության խորհրդանիշ: Այս վերջին անգամ՝ 16-ամյա ոմն Ուլյան Հայկուհի, հունիսի 17-ին, զզված սիրուց ու սիրո ստրուկը լինելուց (այդպես է գրել իր թողած նամակում), նետվել է կամրջից: Համարյա ամեն օր լսում ենք տարբեր ինքնասպանությունների մասին, ընդ որում՝ սույն կամրջից նետվելու (այլ կամուրջներից եւս) դեպքեր հաճախ են լինում՝ ինքնասպանությունների մասին լուրերի մեջ: Իհարկե, ողջ աշխարհի կամուրջները ձգում են ինքնասպաններին, քանի որ ինքնասպանությունն ինքնին մարդկության մյուս հատվածին բան հասկացնելու ձեւ է եւ ոչ թե սոսկ կյանքից հրաժարվելու փաստ: Այնպես որ՝ կամուրջները, աշտարակների, շենքերի կտուրները ավելի բարձր են հնչեցնում բան հասկացնելու այդ ակցիաները: Եթե այդպես չլիներ, այլ ինքնասպանների համար մահը լիներ ցանկալի, մարդիկ, շների ու կատուների նման (նրանք կանխազգալով մահը՝ գնում եւ թաքնվում են՝ աչքից հեռու տեղերում հոգին ավանդելու) կվարվեին եւ ոչ թե իրենց հոգեզուրկ կանեին մի ակնամոտիկ տեղում, կամրջից նետվելով:



Ինքնասպանությունների թվի վերաբերյալ այս տարվա առաջին 6 ամիսների պաշտոնական վիճակագրությունը երեւի շուտով կմատուցվի, այնպես որ՝ այս տարվա թվերին չենք տիրապետում, բայց լրատվական թողարկումների մակարդակով հետեւելով իսկ՝ հասկանալի է, որ ինքնասպանությունների թիվը Հայաստանում շատ մեծ է, իսկ անցած տարվա ինքնասպանությունների վիճակագրությունը ոչ մի լավ սպասումի տեղ այս առումով չի թողնում՝ 225 ինքնասպան՝ 592 ինքնասպանության փորձի հետ համեմատած, ընդ որում՝ 2009 թվականի համեմատ՝ 2010-ին ինքնասպանությունների թիվն աճել է մոտ 19 տոկոսով: Ինքնասպանների մոտ 40 տոկոսը երիտասարդներ են, ընդհանուր թվի մոտ 60 տոկոսը գործազուրկներ են: Պարզ է, որ ինքնասպանության պատճառները սոցիալական են, ընդ որում՝ ինքնասպանները մեծ մասամբ տղամարդիկ են, ովքեր գործազուրկ են, չեն կարողանում եկամտի մշտական աղբյուր գտնել եւ ընտանիք պահել, կամ ավելորդ են զգում իրենց՝ թոշակային տարիքում լինելով: Ընդ որում՝ Հայաստանի ինքնասպանների թիվը չի կարող խիստ ճշգրիտ լինել, քանի որ տարբեր գործոններով պայմանավորված՝ լղոզված է սպանություն-ինքնասպանություն սահմանը:

Իհարկե, մի փոքր հանգստացնենք հատկապես հայ ընթերցողին՝ սա զուտ ներհայաստանյան երեւույթ չէ, օրինակ՝ ԱՄՆ-ում տարեկան 20-25 հազար ինքնասպանություն է տեղի ունենում, իսկ ընդհանրապես՝ բոլոր տեսակի, հատկապես՝ տնտեսական ճգնաժամերի ընթացքում այդ թիվը միշտ ավելանում է, քանի որ մարդիկ կորցնում են աշխատանք, եկամուտ, բնակության վայր եւ երբեմն խուճապի մեջ ելք չգտնելով՝ դիմում այդ քայլին: Հայտնի փաստ է նաեւ, որ կատակլիզմների եւ պատերազմների ժամանակ ինքնասպանությունների թիվը նվազում է՝ մարդիկ լարում են բոլոր քնած հնարավորությունները, սա զանգվածային լարում է, իսկ հասարակության բեւեռացվածությունը հակառակ էֆեկտն է ունենում: Ամեն անգամ հոգեբանները առիթից առիթ խոսում են այն մասին, որ պետք է ուշադիր լինել մեր շրջապատի մարդկանց հանդեպ, նկատել եւ օգտագործել ամեն հնարավորություն՝ հետ պահելու ինքնասպանության հակված մարդկանց՝ այդպիսի ճակատագրական քայլ կատարելուց: Մինչդեռ հերթական լուրը, թե Կիեւյան կամրջից մարդ է նետվել, կրկնվում ու կրկնվում է, ու մի օր չես լսում, թե ասենք տեղական կամ քաղաքային իշխանությունները, չե՛ն անում, գոնե՝ բարձրաձայն մտորեն Կիեւյան կամուրջը ինքնասպանության համար անհարմար վայր դարձնելու ուղղությամբ: Հոգեբանների՝ ուշադիր լինելու հորդորը արդյոք միայն սովորական մարդկա՞նց է վերաբերում, թե նաեւ պետական ու համայնքային կառույցներին ու այդ կառույցները ներկայացնող մարդկանց: Կիեւյան կամուրջը Երեւանում կամաց-կամաց վերածվել է ինքնասպանության խորհրդանիշի: Որեւէ պոտենցիալ ինքնասպան, ինքնասպանության լուրը մտքով անցած-չանցած, նախ մտածում է Կիեւյան կամրջի մասին:

Էլի հոգեբաններին դիմենք, որոնք անպայման կբացատրեն, որ ինքնասպանին միշտ կարող է մի փոքր արգելք, կյանքին կառչելու մի վերջին հնարավորություն, մինչ այդ չառկայծած մի միտք, որ կայցելի՝ վերջին պահին, հետ պահել ինքնասպանությունից: Լավ, բա մեր քաղաքային կառույցներից ոչ մեկի մտքով չի՞ անցնում, որ իզուր ծախսվող միջոցների մի խումբ կարելի է ուղղել եւ կամրջի շրջակայքը անվտանգ մի համակարգով օժտելով, միաժամանակ մի այնպիսի՝ նոր տեխնոլոգիաների համադրություն-վահանակ տեղադրելով, որ թարթիչ-առկայծիչներով, հոգեբանի մաղիչով անցած-ընտրված առկայծող կամ փախչող տողով կհուշի կամրջի վրա հայտնված ինքնասպանին՝ մի վերջին անգամ ստուգիչ մտածել իր կատարելիք քայլի անդառնալիության մասին: Գոնե Կիեւյան կամրջի ինքնասպանների թիվը կնվազի, իսկ այդ մասին լրատվությունն էլ կսթափեցնի մյուսներին: Չէ, մերոնց պիտի տաս բոթես, որ մի կիսաքայլ անեն:

Այս հրապարակումը համարեք առաջին բոթելներից մեկը:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

# 78-ամյա պատրիարքի «բաց հորդորը» 60-ամյա կաթողիկոսին

*1-ին էջից*

**«Նա երիտասարդ է եւ հավանաբար դեռեւս փորձ ձեռք բերելու կարիք ունի», հայոց կաթողիկոսի մասին այսպիսի «վեհափառությամբ» է խոսել վրաց պատրիարքն ու ավելացրել. «Նա խելացի մարդ է, բայց ուզում է ամեն ինչ լինի արագ, ինչը այդպես չէ: Ես նրան ասել եմ, որ ունեմ շատ մեծ փորձառություն՝ 33 տարվա (լինելով պատրիարք), ամենալավը հանդարտությունն է»:**

**Ակնհայտ է, որ վրաց պատրիարքն իր «հովվապետական բարեհոգությունն» է ի ցույց դրել, մոռանալով, որ հայոց կաթողիկոսը եւս հովվապետության ու փորձառության զգալի ճանապարհ է անցել, իսկ որեւէ մեկի պարագայում 33-ամյա գահակալությունը բնավ էլ չի կարող երաշխիք լինել, թե տարիները դեպի իմաստություն եւ, ամենակարեւորը, բոլորի հանդեպ հարգալից վարմունքի են տարել փորձառության ուղին բռնածին:**

**«Մենք խոսել ենք հարաբերություններից: Հայերը ցանկություն ունեն եկեղեցիներ բացելու Վրաստանում: Մենք առաջարկում ենք հետեւյալ կերպ մոտենալ. Ինչ կարվի այստեղ՝ Վրաստանում հայկական եկեղեցիների համար, նույնը պետք է արվի Հայաստանում վրացական եկեղեցիների համար», արդեն իսկ վրացական լրատվամիջոցներով տարածված ու ստորագրված ներկայացված կոմյունիկեի բովանդակությունն այսպես է մեջբերել Իլյա Երկրորդը, նույն մոտեցումը հավելելով նաեւ Հայ եկեղեցու իրավական կարգավիճակի առնչությամբ, թեեւ այդ փաստաթուղթն այդպես էլ չստորագրվեց: Հայոց հայրապետը պարզապես մերժեց այն:**

**Իսկ այն, որ պատարագից հետո իր հայտարարություններով վրաց հոգեւոր առաջնորդը հավաստիացրել է, թե վրացական եկեղեցին «բաց է» համագործակցության համար, թերեւս վրաց պատրիարքի ցանկություններից է, քանի որ իրականում վրաց հոգեւորականներից միայն մեկի՝ հայր Թարիելի «սխրագործությունները» Թբիլիսիի Ս. Նորաշեն եկեղեցու առնչությամբ բավարար են վրացական եկեղեցու համագործակցության պատրաստ լինելու մասին ճիշտ պատկերացում կազմելու համար:**

**Հայտարարելով, այդուհանդերձ, թե վրաց եկեղեցին բաց է համագործակցության համար, Իլյա Երկրորդն ընդգծել է. «Վրաց եկեղեցին բաց է համագործակցության համար յուրաքանչյուրի հետ, սակայն վրաց եկեղեցին թույլ չի տա իր երկիրն ու ազգը դնել անբարենպաստ վիճակի մեջ»: Այստեղ էլ հենց Իլյա Երկրորդն ինքն է իր գործունեության մեջ զուգահեռ տարել պետության հետ, երկրի հետ, որի ղեկավարը եւս կոռեկտ արտահայտվելու հարցում քանիցս բացթողումներ է ունեցել:**

**Վրաց պատրիարքի երիտասարդական գնահատականը հայոց կաթողիկոսին նորություն չէ հայ-վրացական համատեքստում, եթե միայն հիշենք Վրաստանի նախագահի նմանօրինակ պահվածքը: Երկու տարի առաջ էլ, մարտին, Վրաստանի նախագահն իր «փորձագիտական» կարծիքն էր հայտնել Հայաստանի տնտեսության մասին, իբր այն լիովին կախված է Ռուսաստանից, որին էլ Հայաստանի նախագահականից արձագանքեցին նախագահի մամուլի քարտուղարի մակարդակով, որ Սաակաշվիլու գնահատականները ոչ կոռեկտ էին ու նպատակ ունեին շեղելու ուշադրությունը սեփական տնտեսական խնդիրներից:**

**Ինչեւէ, ընդհանրական իրողությունն այն է, որ Հայաստանի հարեւան Վրաստանում, ոչ միայն Հայաստանի պարագայում են սիրում ոչ չափավոր խոսել, փոխարենն արտահայտվելով ինչպես ցանկանան, մոռանալով, որ փորձառությունը միշտ չէ, որ վերածվում է իմաստության:**

**Ու հենց այս պարագայում է, որ ամենից առաջ պետք է հնչեր մեկ ձայն՝ մտահոգության ու բողոքի մեկ ձայն Ջավախքից, հարգալից ու հավասար վերաբերմունք պահանջելով Վրաստանի հոգեւոր առաջնորդից, որը, սակայն, հոգեւոր առաջնորդ չէ Վրաստանում բնակվող հայերի, ադրբեջանցիների, հրեաների, ռուսների, հույների եւ շատ ուրիշների համար: Ջավախքի հայերն ունեն այն լիարժեք իրավունքը, որով կարող են իր տարիների շատ բարձր բարձունքից իրականությանը նայող վրաց պատրիարքին հիշեցնել, որ նա իրավունք ունի խոսելու միայն ի՛ր հոտի անունով, եւ ոչ թե «երկրի ու ազգի»:**

## ՀԱՄԱՌՈՏ

# Թերություններ մանկապարտեզներում

**Երեւանի քաղաքապետի կարգադրությամբ ստեղծված աշխատանքային խումբը մայիսի 18-ից հունիսի 10 ուսումնասիրություններ է կատարել Էրեբունի, Նոր Նորք, Շենգավիթ վարչական շրջանների մի շարք նախադպրոցական ուսումնական հաստատություններում: Աշխատանքային խումբը մանկապարտեզներում հայտնաբերել է թերություններ, իսկ վարչական շրջանների ղեկավարներին հանձնարարվել է՝ մանկապարտեզների տնօրեններին հայտարարել խիստ նկատողություն:**

# Մագիստրոսական եւս 42 անվճար տեղ զորացրվածների համար

**Կրթության եւ գիտության նախարարությունից տեղեկացանք, որ նախարար Արմեն Աշոտյանը ստորագրել է հրաման, որ եւս 42 անվճար տեղ հատկացվելու է բանակից զորացրվածներին՝ մագիստրոսական կրթություն ստանալու համար: Ընդհանուր առմամբ՝ այս տարի զորացրվածների համար հատկացվել է մագիստրոսական կրթության 141 անվճար տեղ:**

Ի. Պ.

# Վերակառուցվում է Ստեփանակերտի տուն-ինտերնատը

**«Հայաստան» համահայկական հիմնադրամն Արցախում իրագործում է խոշորածավալ ծրագիր՝ Ստեփանակերտում ծերերի եւ հաշմանդամների տուն-ինտերնատի վերակառուցումը: Նախաձեռնությունը մոսկվաբնակ հայ գործարար Արմեն Շախազիզյանինն է, որն այդ նպատակով նվիրաբերել է 400 հազար ԱՄՆ դոլար: Ծրագիրը համաֆինանսավորում է ԼՂՀ կառավարությունը:**

**Արցախի միակ տուն-ինտերնատում ներկայումս մշտապես բնակվում են շուրջ 100 ծեր ու հաշմանդամ, իսկ շուրջ 150 մարդ էլ խնամք է ստանում իրենց տներում: Ներկայումս ընթացքում են հիմնանորոգման նախապատրաստական աշխատանքները:**

**«Մեր մշտական բարերարների շարքը համալրվել է եւս մեկ արժանավոր հայորդով: Մոսկովյան գալա-ճաշկերույթին Արցախում ջրի խնդրին ուղղված հանգանակությանը 300 հազար ԱՄՆ դոլար նվիրաբերելուց բացի «Լուդինգ» ընկերության հիմնադիր Արմեն Շախազիզյանը որոշել էր նաեւ նպատակային նվիրատվություն կատարել, որպեսզի արցախցին ծերությունը արժանապատիվ պայմաններում վայելելու հնարավորություն ունենա», այս առիթով նշել է «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրեն Արա Վարդանյանը:**

**Տուն-ինտերնատի երկու մասնաշենքերը վերջին անգամ նորոգվել են 1988 թվականին: Ծերանոցի տնօրեն Իրինա Սարգսյանի հավաստմամբ. «Ահավոր վիճակում են հատկապես սանհանգույցները, կոյուղու համակարգը, ճաշարանը: Ամեն կերպ ջանում ենք կենցաղային անհարմարությունների բացը լրացնել մեր ծերերի նկատմամբ խնամքով ու հոգատար վերաբերմունքով: Կարծում եմ, որ վաղը Ստեփանակերտի ծերանոցը կդառնա ոչ թե վերջին հանգրվան, այլ վաստակած հանգստի այլընտրանքային վայր:**

**Հիմնադրամի բարերար անդամ Արմեն Շախազիզյանը, հաջողված գործարար լինելուց զատ, նաեւ Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի փոխնախագահներից է եւ շարունակաբար իր նպաստն է բերում Հայաստանի եւ Արցախի զարգացմանը ամենատարբեր ոլորտներում:**

«Հայաստան» համահայկական հիմնադրամ

# Չավուշօղլուի «կամուրջներն» ու բոյկոտված ենթահանձնաժողովը

*1-ին էջից*

**Նախորդ առաջարկությամբ Դավիթ Հարությունյանը կոչ է արել սկսել ձեռնարկել քայլեր փոխադարձ վստահության ձեւավորման ուղղությամբ՝ առնվազն երկու պատվիրակությունների միջեւ որպես առաջին նվազագույն քայլ: «Նպատակն այն էր, որ սկսվեն քննարկումները երկու պատվիրակությունների միջեւ՝ ոչ ավելի, քան մեկ միջնորդի մասնակցությամբ, որը չի կարող լինել ասամբլեայի ղեկավարը, կամ այս ժամանակավոր հանձնաժողովի նախագահը», մանրամասնել է Դավիթ Հարությունյանը: Ավելին, մեր պատվիրակությունը առաջարկել է վեհաժողովի նիստերի ժամանակ փոխադարձ մեղադրանքների մորատորիում հայտարարել, առաջարկն արվել է շատ վաղուց, իսկ նախորդ անգամ հենց վեհաժողովի նիստի ժամանակ Դավիթ Հարությունյանը հրապարակային հնչեցրեց առաջարկը: Իսկ այսօր նա նշեց, որ այդ առաջարկը մնացել է անարձագանք:**

**«Եվ ես որպես առաջին քայլ հայտարարում եմ միակողմանի մորատորիում, եւ կոչ եմ անում, որ Ադրբեջանի պատվիրակությունը միանա այդ մորատորիումին», ԵԽԽՎ նիստի ժամանակ երեկ հայտարարել է Դավիթ Հարությունյանը: ԵԽԽՎ-ում ադրբեջանական պատվիրակությունը միանգամից մերժել է առաջարկը:**

Ա. Հ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ԱԶԳ

## Անցուդարձ

# Մանկատների «բեռնաթափման» համար Արմենական-ՌԱԿ-ը ծրագիր է մշակում



*1-ին էջից*

Ինչպես տեղեկացրեց Լոռու մարզային շրջանակի ատենապետ **Սեյրան Ղարիբյանը**, քննարկմանը հրավիրվել ու մասնակցության համաձայնություն էին տվել մարզպետարանի ներկայացուցիչ Նարեկ Սարգսյանը եւ Վանաձորի մանկատան տնօրեն Արշալույս Հարությունյանը, որոնք անհասկանալի պատճառով չէին եկել, եւ դեռ ավելին, անգամ ներկայացուցիչ չէին ուղարկել: Անհասկանալի էր, որ սոցիալական նման խնդիրների քննարկումները ոմանք քաղաքականացնում են ու խուսափում մասնակցել: Քննարկումն իր ներկայությամբ կարեւորել էր Հայ եկեղեցու Գուգարաց թեմի առաջնորդ **Սեպուհ արք. Չուլջյանը**, որի Տերունական աղոթքով էլ սկսվեց քննարկումը: Սեյրան Ղարիբյանը տվյալներ ներկայացրեց այսօր Վանաձորում գործող մանկատանը գտնվող 100 երեխաների մասին: 100-ից 11-ը երկկողմանի ծնողազուրկ են, 13-ը՝ միակողմանի, 27-ի ծնողները հրաժարվել են իրենց զավակներից, 36-ը մնացել են առանց ծնողական խնամքի (ծնողներն անհայտ են), 41-ը միայնակ մայր ունեն, 6-ի ծնողները գտնվում են կալանավայրերում: Այսօր մանկատանը ապրում են 5 նորածիններ: Մանկատան երեխաներից 1-6 տարեկանները 16-ն են, 54-ը՝ դպրոցականներ, 22-ը՝ բուհի եւ քոլեջների ուսանողներ:

Արմենական-ՌԱԿ Լոռու մարզային գրասենյակում (Վանաձոր) քննարկմանը մասնակցող կուսակիցներին եւ հյուրերին ողջունեց **Հակոբ Ավետիքյանը** եւ գոհունակություն հայտնեց նման կարեւոր խնդրով քննարկում անցկացնելու համար, որի թեման շատ կարեւոր է ոչ միայն այսօր, այլ նաեւ վաղվա Հայաստանի համար: «Այս նախաձեռնությունը մտահոգության արտահայտություն է, մտահոգություն՝ ոչ միայն այս մարզի համար, այլեւ ողջ Հայաստանի, եւ որը հետզհետե ահագնանում է: Այս քննարկումը միտում ունի եւ ուղղված է այն բանին, որ նախ իրազեկվենք, իրավիճակին մանրամասն տեղեկանանք, թե պետական մարմիններն ու հասարակական կազմակերպությունները ի՞նչ աշխատանքներ են կատարել եւ կատարում, եւ մենք ինչպես կարող ենք նպաստել այդ աշխատանքների հեզասահ ընթացքն ապահովելու համար, ի խնդիր մեր մատաղ սերնդի այս հատվածի կեցության, կացության եւ ապագայի», ասաց նա:

Այնուհետեւ իրենց ուսումնասիրություններն ու առաջարկություններն ներկայացրին, վարչության դիվանի անդամ Գայանե Մուրադյանի համադրմամբ, Արմենական-ՌԱԿ Կենտրոնական վարչության անդամներ Աիդա Անդրիասյանը, Սամվել Տոնոյանը, Սուսաննա Ղազարյանը, «Լոռու մարզ» թերթի խմբագիր Մանվել Միկոյանը, քոլեջի դասախոս Նարինե Կռոյանը, Անի Ժամհարյանը, Վանաձորի հայորդաց տան տնօրեն Թամարա Հարությունյանը եւ ուրիշներ: Առաջարկություններ եղան ստեղծել մի կառույց, ապահովված իրավաբաններով ու հոգեբաններով, որը բոլոր խնդիրներին ըստ էության ծանոթանալուց հետո պետք է անհատական վերաբերմունք ցուցաբերի յուրաքանչյուր երեխայի նկատմամբ, «բեռնաթափելով» մանկատները, թեթեւացնելով որդեգրման կարգը, ամբողջական հաշվառելով ու մանրամասն դասակարգելով մանկատանը գտնվող երեխաների ծնողների կրթական մակարդակը, ստեղծելով միասնական ծրագիր, եւ դիմել կառավարությանը եւ նաեւ հետագայում օրենսդրական առաջարկով հանդես գալ:

Ներկաներին հետաքրքրում էր, թե այդ խնդիրներում մեր եկեղեցին ի՞նչ դեր կարող է ստանձնել:

«Այն մտահոգությունները, որ դուք ունեք քննարկվող հարցի շուրջը, շատ բնական եմ համարում, եւ հոգեհարազատ են ինձ, քանզի մեր երկրի ապագան պայմանավորված է նաեւ մեր գենոֆոնդով, որը գնալով նվազում է՝ կապված ծնելիության նվազման, արտագաղթի, սոցիալական վիճակի չբարելավման հետ: Ձեւավորվեց միջին խավ, եւ ունենք հարուստներ, կրկին հարուստներ, եւ չնչին մաս իրենց քրտինքով ապրող, աջ ու ձախ աշխատանք փնտրող մի խավ, որը փորձում է իր սոցիալական վիճակը քիչ թե շատ ապահովել: Մեր երկրում արժեքները վերարժեւորելու խնդիր ունենք այսօր: Այս 20 տարիների մեր հաջողությունները խաբուսիկ են: Մենք ունենք մեկ հաջողություն՝ պետականություն ենք հռչակել եւ ունենք բանակ: Մնացած որեւէ ոլորտ որ վերցնենք՝ անհաջողության է մատնված: Խնդիրները շատ-շատ են, իսկ դրանցից մեծագույնների շարքում է նաեւ մանկատներում հայտնված մանուկների խնդիրը: Այսօր բազմաթիվ եւ տարաբնույթ խնդիրներ են առաջացել մանկատներում: Սակայն որտե՞ղ ենք մենք ուզում մեզ տեսնել, մեր աշխատանքները ո՞ր ուղղությանը մղենք, որպես հայ մարդիկ, եւ ո՞ր հարցում կարող ենք մենք օգտակար լինել, եւ դաշտը որքանո՞վ է բարենպաստ այդտեղ մտնելու համար, որքանո՞վ մենք կամքի ուժ ունենք, եթե անգամ արգելափակոցներ կան, դրանք հաղթահարելու եւ մուտք գործելու եւ տիրոջ իրավունքով ասելու, որ այս երեխաների համար նաեւ ե՛ս եմ պատասխանատու: Տուր ինձ պատասխան հաշիվ, թե ինչու երեխաների ճակատագիրը այդպես դասավորվեց: Ինչպե՞ս կարող է պետական մի կառույց, այս պարագայում՝ մանկատուն, այս կամ այլ կուսակցության «սեփականությունը» դառնա: Մի՞թե մենք իրավունք չունենք այդ հարցերով զբաղվելու»:

Այնուհետեւ սրբազանն անդրադարձավ ՀԿ-ներին, որոնք այդքան էլ արդյունավետ չեն գործում, բացառությամբ թերեւս «Օրրանի», որից օրինակ վերցնելու շատ բան կա թե սննդի, թե ուսման ու կրթական բնագավառներում:

Անդրադառնալով ՌԱԿ-ի գաղափարախոսությանը, սրբազանն ափսոսանքով նշեց, որ այդ գաղափարախոսությունը այդպես էլ իր տեղը չգտավ մեր հասարակության մեջ: «ՌԱԿ-ը ունեցավ ակտիվ դեմքեր ու դեմքեր, սակայն չունեցավ այն մնայուն տեղը, որին արժանի էր, ինչ-ինչ տրոհումների եւ այլնի պատճառով: Անցան այդ շրջանները եւ այժմ այս նոր կառույցը նոր էջ է բացել, նոր գործելաոճով է սկսել գործել ու տա Աստված, որ կուսակցությունը համալրվի ակտիվիստներով եւ հավանության արժանացած ծրագիր հաջողեցնի»:

Սրբազանն առաջարկեց ստանալ Վեհափառ հայրապետի օրհնությունը եւ ծրագիր իրականացնել հայորդյաց տների հետ, համագործակցել մանկատների երեխաների հետ: Չուլջյան սրբազանի ասելով, մանկատներ հոգեւորականները հաճախ են այցելում, կա կրոնի պատմության ուսուցիչ, ապահոված են դասագրքերով: «Եթե ինձ մնար, շեշտեց Սեպուհ արք. Չուլջյանը, ապա ես բոլոր մանկատները կհանձնեի Մայր աթոռի տնօրինությանը: Այն բյուջեն, որը հատկացնում է մեր կառավարությունը մանկատներին, այդ գումարի ուղիղ կեսով ես կլուծեի այդ խնդիրները, որ ծառացել ու առաջացել են այսօր բոլոր մանկատներում, ժամանակավոր կացարաններում...»:

Մի քանի ժամ ընթացող քննարկման ընթացքում անընդհատ շեշտվում էր հարցը՝ «որտեղ ենք տեսնում մեր աշխատանքները, որպեսզի բեռնաթափվեն մանկատները»: Հասարակությունը միանշանակ իր մտահոգությունն ու մասնակցությունը պետք է ունենա քննարկվող խնդրի շուրջը: Մանկատները դարձել են փակ կառույցներ եւ անձեռնմխելի: Այդ կարծիքին հանգելու պատճառը հենց այն անպատասխանատուներն էին, որոնք խուսափեցին մասնակցել քննարկմանը, այդպիսով դուռը բաց թողեցին ամեն տեսակ ենթադրությունների առաջ, եզրակացրին մասնակիցները:

Հակոբ Ավետիքյանը, ամփոփելով քննարկումը, նշեց, որ բոլոր զեկույցներն ու առաջարկությունները մեկ անգամ եւս կվերանայվեն եւ ամենակարեւորները տեղ կգտնեն այս կապակցությամբ Արմենական-ՌԱԿ-ի մշակվող ծրագրում: Ծրագրում ընդգրկված առաջարկները կքննարկվեն բոլոր կառույցներում, որից հետո հստակեցված ծրագիրը կներկայացվի կառավարություն:

Քննարկման ավարտից հետո Վանաձորի հայորդյաց տան տնօրեն Թամարա Հարությունյանի ուղեկցությամբ կուսակցության կենտրոնական վարչության անդամները այցելեցին հայորդյաց տուն եւ ծանոթացան հոգատար տան առօրյային:

Քննարկման ավարտից հետո 11 նորագիր անդամներ այդ օրը ավանդական կուսակցությանն անդամակցելու երդում տվեցին՝ «Երդվում եմ խղճովս ու պատվովս ծառայել ազգիս ու ժողովրդիս», համալրելով Արմենական-ՌԱԿ շարքերը:

**ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ**
**Վանաձոր-Երեւան**

## ՃՈՒՃԱՆԻՇՆԵՐ

# Տնտեսական ակտիվության աճը՝ 9,9 տոկոս

### *Արտաքին առեւտրի բացասական տարբերությունը խորանում է*

Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության հրապարակած 2011-ի մայիս ամսվա սոցիալ-տնտեսական ցուցանիշների համաձայն, Հայաստանի տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ) նախորդ տարվա մայիսի համեմատ գրանցել է 7,7 տոկոս աճ: Հիշեցնենք, որ սկսած այս տարվանից, Ազգային վիճակագրական ծառայությունն անցնում է մակրոտնտեսական ցուցանիշների հավաքման, հրապարակման եւ ամփոփման նոր մեթոդի: Մասնավորապես, դադարեցվում է համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ամսական հաշվարկումը, իսկ որպես տնտեսության վիճակը գնահատող ամսական ցուցանիշ ներկայացվելու է տնտեսական ակտիվության ցուցանիշը:

Տնտեսության ճյուղերից ամենամեծ աճն ունեցել է արդյունաբերությունը: Նախորդ տարվա մայիսի համեմատ արդյունաբերությունն աճել է 25,1 տոկոսով, ինչն այս ճյուղի համար աննախադեպ է: Գյուղատնտեսության արտադրանքի ծավալը նախորդ տարվա մայիսի համեմատ աճել է ընդամենը 0,1 տոկոսով, իսկ ապրիլի նկատմամբ՝ 49,2 տոկոսով: Շինարարությունը մայիսին արձանագրել է 5,1 տոկոս անկում նախորդ տարվա մայիսի համեմատ, իսկ այս տարվա ապրիլի համեմատ՝ 70,3 տոկոս աճ:

Մանրածախ առեւտրում արձանագրվել է 2 տոկոս աճ անցյալ տարվա մայիսի համեմատ, իսկ այս տարվա ապրիլի նկատմամբ՝ 6,9 տոկոս աճ: Ծառայությունների ոլորտում անցյալ տարվա մայիսի նկատմամբ աճը կազմել է 5,6 տոկոս, իսկ այս տարվա ապրիլի նկատմամբ՝ 0,2 տոկոս: Էլեկտրաէներգիայի արտադրությունը աճել է 26,8 տոկոսով, իսկ ապրիլի նկատմամբ՝ 11,5 տոկոսով:

Արտաքին առեւտրաշրջանառությունը 2011-ի մայիսին 2010-ի մայիսի նկատմամբ ավելացել է 23 տոկոսով եւ կազմել 474 մլն դոլար: Արտահանումը կազմել է 114 մլն դոլար, արձանագրելով 39,7 տոկոս աճ, իսկ մայիսին ապրիլի նկատմամբ՝ 3,1 տոկոս աճ: Ներմուծումը կազմել է 360 մլն դոլար, նախորդ տարվա մայիսի համեմատ աճելով 18,5 տոկոսով, իսկ այս տարվա ապրիլի համեմատ՝ 6,5 տոկոսով: Արտաքին առեւտրի բացասական հաշվեկշիռը, որն ապրիլի արդյունքներով փոքր-ինչ բարելավվել էր, կրկին վատթարացել է, կազմելով 246 մլն դոլար:

Միջին ամսական աշխատավարձը Հայաստանում մարտին կազմել է գրեթե 112 հազար դրամ, մասնավոր հատվածում՝ 139 հազար դրամ, պետականում՝ 89 հազար դրամ:

Այսպիսով, տնտեսական ակտիվության աճը մայիսին մոտեցավ երկնիշ ցուցանիշին, ընդ որում՝ հիմնականում արդյունաբերական արտադրանքի աճի շնորհիվ: Ամռան ամիսներին գյուղատնտեսության արտադրանքի ցուցանիշը կսկսի ավելի մեծ ազդեցություն ունենալ տնտեսական ակտիվության աճի ցուցանիշի վրա: Մյուս կողմից, սակայն տնտեսության մյուս ճյուղերի ցուցանիշները բավականին համեստ են, իսկ շինարարությունը դեռ գտնվում է տեղապտույտի մեջ: Մտահոգիչ է նաեւ արտաքին առեւտրի խորացող բացասական տարբերությունը, ինչը նշանակում է, որ արտահանման խթանման ուղղությամբ տեսանելի արդյունքներ դեռ չունենք:

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

# Վերականգնվող էներգետիկայի եւ էներգախնայողության զարգացման համար

### *Հանդիպում Շիրակի մարզի համայնքների ղեկավարների հետ*

Հայաստանի վերականգնվող էներգետիկայի եւ էներգախնայողության հիմնադրամի ներկայացուցիչները Շիրակի մարզպետարանի աջակցությամբ Գյումրիում ճանաչողական հանդիպում էին կազմակերպել մարզի համայնքների ղեկավարների հետ, նպատակ ունենալով կիսել ոլորտում իրենց կուտակած փորձը եւ հետագա համագործակցության հիմք դնել: 2005 թվականից գործող այս կառույցն իրականացնում է վարկային եւ դրամաշնորհային ծրագրեր՝ ուղղված Հայաստանում նույնանուն ոլորտների զարգացմանը:

Մեր երկիրն ունի սեփական վերականգնվող էներգիայի մեծ պաշարներ, որոնց օգտագործումը թույլ կտա ապագայում բավարարել, հիմնադրամի մասնագետների գնահատմամբ, էլեկտրաէներգիայի պահանջարկի մինչեւ 30 տոկոսը: Հիդրոէներգիայի, հողմաէներգիայի, կենսազանգվածի, արեւային եւ երկրաջերմային էներգիայի պաշարներով հարուստ են հանրապետության մարզերը, որոնցում անցած տարիներին հիմնադրամի մասնակցությամբ որոշակի աշխատանք է կատարվել: Մասնավորապես, քաղաքային ջեռուցման ծրագրով 2005 թվականից ի վեր Շիրակի մարզում 13 դպրոցների ջերմամատակարարման վերականգնման աշխատանքներ են իրականացվել: Վերջին 4 տարիների ընթացքում հանրապետությունում ֆինանսավորված 26 ՀԷԿ-երից 1-ը եղել է այստեղ: Ըստ հիմնադրամի ներկայացրած տեղեկանքի՝ Շիրակում ուսումնասիրված է Ախուրյան գետի հիդրոէներգետիկ ներուժը: Գետի ավազանում նախատեսված է կառուցել 14 փոքր ՀԷԿ. երկուսը՝ Կապս եւ Ախուրյան ջրամբարներին կից, երեքը՝ Ախուրյան (Ձորաձոր) եւ Թալին ջրանցքների վրա եւ 9 փոքր ՀԷԿ՝ դերիվացիոն տիպի: Մարզում առկա է նաեւ հողմաէներգետիկ լուրջ ներուժ, որն արդեն իսկ ուսումնասիրվել է միջազգային մի քանի ծրագրերով: Այդ ուսումնասիրությունների համաձայն՝ Քարախաչի լեռնանցքում առկա է 250-300 մվտ հզորության քամու ներուժ, որը յուրացնելու նպատակով արդեն գործնական քայլեր են անում հայկական «Արէներջի» եւ իտալական «Գերեթ» ընկերությունները: Հնարավոր է, որ շուտով մարզում շահագործման հանձնվի Հայաստանի խոշորագույն հողմաէլեկտրակայանը:

Գյումրիում կազմակերպված հանդիպմանը կառույցի կողմից իրականացվող ծրագրերը համայնքների ղեկավարներին ներկայացրին Հայաստանի վերականգնվող էներգետիկայի եւ էներգախնայողության հիմնադրամի փոխտնօրեն Հայկ Եսայանը, էներգախնայողության ծրագրի ղեկավար Տիգրան Սեկոյանը:

**Գ. Ս.**

# Ցավակցություն

ՀՀ Կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմը ցավակցում է Արտաշես Թառլամազյանին սիրելի մոր՝
**ԱՐԱՔՍՅԱ ԹԱՌԼԱՄԱԶՅԱՆԻ**
մահվան կապակցությամբ:

ԱԶԳ

## Ծովարշավ

# «Արմենիա»-ի հայտնագործությունը

Կարծում եմ, ընթերցողները հիշում են Սիդնեյում մեզ Մարթա Աբգար մայրիկի պատմածը: Հիշեցնեմ, դա այն մասին էր, թե ինչպես իննսունամյա տիկին Մարթան իր որդու հետ Սիդնեյից թռավ ինդոնեզական Սուրաբայա քաղաք-նավահանգիստ միայն նրա համար, որ ծաղիկներ դնի իր հոր գերեզմանին: Նրա տանը մեր զրույցի ժամանակ մի նրբին ու հուզիչ միտք արտահայտեց. «Երբ տեսնում ես ճանապարհի վերջը, որը դեպի մահ է տանում, սկսում ես մտածել պապերիդ մասին»: Հիշեցնեմ եւ այն, որ նա ըստ էության, փոփոխեց նաեւ «Արմենիա»-ի երթուղին: Հենց նրանից մենք իմացանք, որ իր ծննդավայր Սուրաբայայում մինչեւ հիմա էլ գոյություն ունի եկեղեցին, եւ դեռ ավելին՝ նույնիսկ գործում է: Ընդգծեց եւ այն, որ պատերին պահպանվել են հայերեն արձանագրություններ: Բնականաբար ինչ-որ տեղ Եվրոպայում կամ Ամերիկայում նման իրավիճակում մենք դժվար թե փոխեինք երթուղին, իմանալով, որ նման անհասանելի վայրում արդեն չկան հայրենակիցներ, եւ այն էլ, երբ մեր ժամկետներն ուղղակի խեղդում են, իսկ առջեւում դեռ երկար ու դժվարին ուղի ունենք անցնելու: Բոլոր աղբյուրներում բերված է եկեղեցու միայն մեկ լուսանկար՝ Ինդոնեզիայի մայրաքաղաք Ջակարտայում, բայցեւ միաժամանակ ճշգրիտ հայտնի է, որ այդ Սուրբ Հովհաննես եկեղեցին արդեն գոյություն չունի: Քանդել են: Այնտեղ փողոց են գցել՝ առանց մայթերի: Իսկ այ, Սուրաբայայի, Սուրբ Գեւորգ եկեղեցու մասին կա միայն մի ինչ-որ անհասցե հիշատակում: Արդեն ոչ ոք չգիտեր, թե այն ինչպիսին էր: Միայն ինձ մոտ կար տիկին Մարթայի տված հին լուսանկարը:

Ինդոնեզական վիզաներ չունեինք: Բարեբախտաբար իմ անձնագրի ժամկետը լրացել էր: Մտքովս չէր անցնում նայել: Բայց չգիտես ինչու, բոլոր նրանք, ովքեր նախկինում վիզաներ էին տվել, նույնպես ուշադրություն չէին դարձրել, որ այն շուտով ժամկետանց կդառնա: Զանգեցի «Կիլիկիա»-ի եւ «Արմենիա»-ի անձնակազմի պատվավոր անդամ, Հայաստանի արտգործնախարարության գլխավոր քարտուղար Շահեն Ավագյանին: Ինձ համար նոր անձնագիր ձեւակերպեցին եւ հետն էլ ինդոնեզական մուտքի վիզա:

Սիդնեյից հետո ավստրալիական Քեյնս նավահանգստում «Արմենիա»-ն պետք է անցներ շարժիչի հերթական (ժամանակը հասել էր) ախտորոշիչ զննում: Եվ ոչ միայն շարժիչի: Հենց Քեյնսում կա ներկայացուցիչ-ընկերություն մեր շարժիչի համար: Իսկ դա երկար պատմություն է: Բացի այդ, վերանորոգման այլ աշխատանքներ էլ պետք է կատարվեն, կապված առագաստի, ինքնագնաց սարքի, ձգապարանների հետ: Թռչում եմ Դելի, որտեղ Միշա Բաղդասարովի, այսինքն՝ «Արմավիա»-ի միջոցով Շահենն ուղարկել է իմ նոր անձնագիրը: Կանգ առա Սինգապուրում, որտեղ երեք օր կարելի է մնալ, եթե տարանցիկ ուղեւոր ես: Ինձ դիմավորեց քաղաքում հայտնի գիտնական, պրոֆեսոր Գագիկ Գուրզադյանը՝ ակադեմիկոս Գրիգոր Գուրզադյանի որդին: Շուտով Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում հանդիպեցինք ողջ համայնքի հետ: Պայմանավորվեցինք «Արմենիա»-ի հետ գալիք հանդիպումը կազմակերպելու մասին: Դելիում եմ: Ինձ դիմավորեց Հայաստանի դեսպան Արա Հակոբյանը: Այս այցելության անհրաժեշտության ու կարեւորության մասին կպատմեմ, երբ «Արմենիա»-ն խարիսխ նետի Հնդկաստանի նավահանգիստներից մեկում: Իսկ առայժմ արեւադարձային հրեշավոր տոթ ու տապի պայմաններում նորից Դելիից Ջակարտա եմ թռչում՝ Սինգապուրի միջով: Նման եւ այլ արտահերթ ծախսերը իր վրա է վերցրել Ռալֆ Յիրիկյանը: Ես շտապում եմ: Պետք է հասցնեմ դիմավորել «Արմենիա»-ին չծրագրված Սուրաբայա քաղաքում: Ջակարտայում ինձ դիմավորեց Ինդոնեզիայում ԱՄՆ-ի փոխհյուպատոս Պիտեր (Պետրոս) Դավիդյանը: Դիմավորեց կնոջ հետ: Դեռ օդանավակայանում տհաճ լուր հաղորդեց: Հետաքրքրվել էր պաշտոնական շրջանակներում եւ իմացել, որ ոչ շատ վաղուց մի ինչ-որ կատերով առանց վիզայի Ինդոնեզիայի ինչ-որ նավահանգիստ են մտել մի ավստրիացի եւ ամերիկացի: Նրանց ձերբակալել են: Երկար պահել են փակի տակ: Նույնիսկ ամերիկյան դեսպանությունը չի կարողացել ոչնչով օգնել: Հետո նրանց շպրտել են բաց ծով, թույլ չտալով մտնել եւ ոչ մի նավահանգիստ: Ես Պետրոսին եւ նրա տիկնոջը՝ Հռիփսիմեին հանգստացրի, ասելով, որ նույնիսկ շատ լավ եմ պատկերացնում, թե դա ինչպես է տեղի ունեցել: Լկտիաբար ծովախորշ են մտել երկու ինքնագնաց տիպեր՝ առանց ինդոնեզական դրոշի եւ հավանաբար նույնքան լկտի էլ իրենց պահել են: Իսկ մենք ընդամենը ճանապարհորդներ ենք, որոնք շուրջերկրյա նավարկություն են կատարում: Դա հաստատող բազմաթիվ պաշտոնական փաստաթղթեր կան: Նման դեպքերում մենք իրավունք ունենք ջուր եւ պարեն գնել՝ պահախմբի ուղեկցությամբ:

Ջակարտայում անհնար է (բոլորի համար) քայլել քաղաքում: Մայթեր գոյություն չունեն: Այստեղ ապրում է տասներկու միլիոն մարդ, եւ փողոցներով սլանում են տասներեք միլիոն ավտոմեքենաներ, չհաշված միլիոնավոր մոտոցիկլետները, որոնց վարորդները տեղափոխում են իրենց կանանց եւ կրծքի երեխաներին: Եվ աչքդ միայն դա է տեսնում՝ հազարավոր կրծքի երեխաներ եւ...ահռելի արագություն: Գիշերեցի Դավիդյանների մոտ: Առաջին անգամ էր նման բան լինում «Կիլիկիա»-ի եւ «Արմենիա»-ի նավարկության պատմության ողջ ընթացքում:



*Հայերեն տեքստով մարմարե սալիկների մոտ:*

Պետրոսը ծնվել է Հալեպում: Նախնիներն Իրանից են եւ Վանից: Մայրը Վրթանես Փափազյանի տոհմից է: Ես չեմ կարող չթվարկել Փափազյանի գործունեության ասպարեզները. գրող, հասարակական, քաղաքական, մշակութային գործիչ, գրաքննադատ, գրականության պատմագետ, ազգագրագետ, խմբագիր, մանկավարժ, թարգմանիչ: Դեռ 19-րդ դարի վերջին եւ 20-րդ դարի սկզբին Վրթանես Փափազյանը գործուն կերպով գիտակցեց Ղարաբաղի դերը հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարում: Նրա խմբագրած թերթերից մեկը այդպես էլ կոչվում էր՝ «Ղարաբաղ»:

Վրթանեսն առաջիններից մեկը ձեռնարկեց ապրիլի քսանչորսը Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի միջազգային օր հաստատելը: Պետրոսի կին Հռիփսիմեն ծնունդով Կապանից է: Չեմ կարող պատկերացնել, թե ինչ էինք անելու առանց այդ ամուսնական զույգի: Սուրաբայան գտնվում է Ճավա կղզու մյուս ծայրում: Այստեղից ավելի քան հազար կիլոմետր հեռու: «Արմենիա»-ն Սուրաբայա կժամանի հունիսի երեքին, ուրբաթ օրը, կեսօրին: Վաղ առավոտյան Հռիփսիմեի հետ թռանք Ջակարտայից: Պետրոսը կարող էր մեր հետեւից թռչել միայն աշխատանքային օրվա ավարտից հետո:

Մեծ նախապատրաստական աշխատանք կատարեցին Շահեն Ավագյանը, Երեւանում Ինդոնեզիայի հյուպատոս Երվանդ Օսկանյանը եւ քարտուղարուհի Լուիզան: Օդանավակայանից մեզ գխապատառ նետեցինք Սուրաբայայի նավահանգստի ներգաղթի բաժանմունք: Ծառայության պետ Ռոզին (տղամարդու ազգանուն է) երկար եւ ուշադիր լսեց Հռիփսիմեին, հարգանքով վերաբերվելով նրա դիվանագիտական անձնագրին, այն էլ՝ ԱՄՆ-ի: Ասաց, որ անձնակազմի բոլոր անդամներին մուտքի վիզա կտրամադրի քառասունութ ժամով, բայց այն պայմանով, եթե նավահանգստի պետը «Արմենիա»-ին թույլ տա կառանվել: Հենց ինքն էլ զանգեց նավահանգստի պետին: Վերջինս, ինչպես երեւում էր, ոչինչ չհասկացավ: Նախադեպ չկար: Խնդրեց, որ Ռոզին, ես եւ Հռիփսիմեն անցնենք իր մոտ: Այդ ժամանակ արբանյակային կապով զանգեց Արիկը. «Մենք ծովախորշում տնգտնգում ենք, չիմանալով որտեղ կառանվել»: Ես ասացի, որ կառանվեն ամենակենտրոնում: Միեւնույնն է, մինչեւ մեզ հետ ամեն ինչ չպարզեն, ոչ մի քայլ չեն ձեռնարկելու: Չէ՞ որ պետի մոտ ենք գնում: Պետը լսեց մեզ եւ ասաց, որ խնդիր չկա, միայն թե ինքը իր պետի համաձայնությունը պետք է ստանա: Եվ երկար խոսում էր վերջինիս հետ հեռախոսով: Լսափողը վերցրեց Հռիփսիմեն եւ անգլերենից ինդոնեզերենին անցնելով (ու հակառակը), բացատրեց, թե որքան կարեւոր է դա մեզ բոլորիս համար, ավելացնելով, որ իր ամուսինը՝ ԱՄՆ-ի փոխհյուպատոսը ուր-որ է վայրէջք կկատարի: Հաստատ այստեղ է թռչում այդ հարցով: Բարի Ռոզին վերջնականապես անցավ մեր կողմը: Այնժամ որոշեցինք, որ կհանդիպենք կառանավայրում՝ «Արմենիա»-ի մոտ: Հանդիպեցինք: Եվ նրանք հասկացան, որ ամեն ինչ նորմալ է: Չափից ավելի մաքուր էր «Արմենիա»-ի տախտակամածը: Վերեւում գեղեցիկ ծածանվում էին Ղարաբաղի, Հայ Առաքելական Եկեղեցու, Երեւանի դրոշները եւ քիչ այն կողմում՝ Ինդոնեզիայինը: Նավահանգստի պետը անսպասելիորեն արտաբերեց ճակատագրական «Դե այդպես էլ կասեինք»-ը: Դա նշանակում էր, որ «Արմենիա»-ի արտաքին տեսքն ինքնին խոսում էր մտադրությունների ազնվության մասին: Ապա ասաց, որ քիչ սպասենք: Մեզ թվաց, թե գնում է ինչ-որ մեկին զանգելու: Այնինչ աղոթելու գնաց: Ժամանակն էր: Դեռեւս ներգաղթի գրասենյակում էինք տեսել, թե ինչպես խոսակցության թեժ պահին մեր բարեկամ Ռոզին մի կողմ գնաց: Հանեց կոշիկները: Մտավ բակ ու սկսեց ոտքերը լվանալ... Ապա անցավ մի այլ սենյակ, աղոթեց եւ վերադարձավ շատ գոհ:

Հարցը լուծված էր: Ոչ մի կնիք չդրեցին անձնագրերում: Յուրաքանչյուրին տվեցին կապույտ թղթի մեկական թերթ՝ կնիքով, որը հաստատում էր, որ ամբողջ երկու օր կարող ենք գտնվել Սուրաբայայում:

*տես էջ 8*

## ՑԵՂԱՍՊԱՆԱԳԵՏԸ

# Անհատնում կորովի տեր գիտնականը

*Վահագն Տատրյանը 85 տարեկան է*



***Հոգնածության նշույլ անգամ չցուցաբերելով՝ Տորոնտոյում (Կանադա) գործող «Զորյան ինստիտուտ» ցեղասպանության ուսումնասիրության բաժնի տնօրեն, միջազգային ճանաչման արժանացած հայտնի ցեղասպանագետ պրոֆ. Վահագն Տատրյանը վերջերս նշել է իր ծննդյան 85-ամյակը, տեղեկացնում է այդ առթիվ վերոնշյալ ինստիտուտից ստացված հաղորդագրությունը: Նա անհատնում կորովով 50-ից ավելի տարիներ է նվիրել՝ ուսումնասիրելու համար ցեղասպանության հիմնախնդրի ամենատարբեր դրսեւորումներն ու ոլորտները:***

***Ականավոր գիտնականի հոբելյանի առթիվ Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը նշել է. «Դուք մեր ժամանակների ամենակարեւոր հայ գիտնականներից մեկն եք, ում գործն ու հայտնաբերումները հսկայական նշանակություն ունեն ինչպես հասարակական, այնպես էլ քաղաքական ոլորտներում: Հայերի ցեղասպանության միջազգային ճանաչման ասպարեզում կատարած Ձեր ներդրումներն ու ժխտողական փորձերի դեմ հարատեւ ջանքերը միշտ էլ հաջողությամբ են պսակվել: Ձեր աշխատանքը անգնահատելի ազդեցություն է ունեցել ընդհանրապես ցեղասպանության եւ նրա ժխտողականության ուսումնասիրության ասպարեզում՝ դարձնելով Հայաստանը այդ բնագավառի առաջավոր երկրներից մեկը»:***

***Իր հարատեւ նվիրվածության եւ ձեռքբերումների համար Տատրյանին շնորհավորել են նաեւ բազմաթիվ ականավոր գործընկերներ աշխարհի տարբեր ծայրերից: Նշենք դրանցից մի քանիսը.***

«Հայերի ցեղասպանության վերաբերյալ Վահագն Տատրյանի պատմական հետազոտությունները հագեցած են իրավական հարցերի խոր ըմբռնողությամբ: Ի մասնավորի՝ նա քննության է ենթարկել մոտ մեկ դար առաջ գործադրված ջանքերը՝ ցեղասպանություն իրագործողներին արդարադատության առաջ կանգնեցնելու համար: Նրա ներդրումը ինչպես պատմական, այնպես էլ իրավաբանական գիտությունների ասպարեզում հսկայական է»:

**Պրոֆ. Ուիլյամ Շաբաս**
*Ցեղասպանագետների միջազգային ասոցիացիայի նախագահ եւ Գոլուեյի «Իռլանդիայի ազգային համալսարանի» Մարդու իրավունքների իռլանդական կենտրոնի տնօրեն*

«Պրոֆ. Վահագն Տատրյանը Հոլոքոստի եւ հայերի ցեղասպանության համեմատական ուսումնասիրությունների ամենավաղ շրջանի ուսանողներից է եղել եւ վերջին տարիներին հասել է գագաթնակետին իր պրպտումների, որոնց մաս է կազմում նաեւ հետօսմանյան ժամանակաշրջանի թուրքական ռազմադաշտային դատարանների դատական ընթացակարգերի առաջնակարգ ուսումնասիրությունը»:

**Պրոֆ. Իսրայել Չառնի**
*Ցեղասպանագետների միջազգային ասոցիացիայի նախկին նախագահ, Երուսաղեմի ցեղասպանության եւ Հոլոքոստի ինստիտուտի գործադիր տնօրեն եւ «Ցեղասպանության կանխարգելումը՝ այժմ» (Genocide Prevention Now) հանդեսի գլխավոր խմբագիր*

«Թեմայի բոլոր հակասական եւ կոնֆլիկտային գրականության, այդ թվում նաեւ թուրքական ժխտողական եւ բացատրական հրատարակությունների մեջ Տատրյանի աշխատանքը իրավական տեսակետից ամենահամոզիչն է եւ իր կշռադատված փաստերով ամենամոտիկը պատմական ճշմարտությանը»:

**Պրոֆ. Մ. Բասսիունի**
*Դը Պոլ համալսարանի մարդու իրավունքների միջազգային ինստիտուտի պրեզիդենտ եւ իրավաբանության պրոֆեսոր*

«1977 թվին Ադոռնո մրցանակի ստանալու առթիվ արտասանած ճառում ականավոր սոցիոլոգ Նորբերտ Էլիասը նշել էր. «Այն ջահը, որ կրում եմ, ինձանից առաջ շատ լավ վառված էր, եւ ինձանից հետո ուրիշները կշարունակեն առաջ տանել»: Տատրյանի պարագայում մենք պետք է նշենք, որ նա իրենից առաջ վառված ջահը կրողը կամ առաջ տանողը չէ, այլ այդ ջահի՝ հայերի ցեղասպանության ուսումնասիրության ասպարեզի ջահի ստեղծողն ու հնարողը: Ինձ համար Տատրյանը համեմատական ցեղասպանագիտության հիմնադիր-մտավորական է: Նա հիմքը դրեց հայերի ցեղասպանության ուսումնասիրություններին, որոնց վրա մենք կատարում ենք մեր հետազոտությունները»:

**Պրոֆ. Թաներ Աքչամ**
*Կլարք համալսարանի հայերի ցեղասպանության ուսումնասիրության Գալուստյան-Մուգար ամբիոնի վարիչ*

Տատրյանին շնորհավորական խոսքեր են հղել նաեւ Վաշինգտոնում Հայաստանի դեսպան Թաթուլ Մարգարյանը, Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը, Հայաստանի ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն Հայկ Դեմոյանը, «Զորյան ինստիտուտի» պրեզիդենտ Գրեգ (Գուրգեն) Սարգսյանը, «Զորյան ինստիտուտի» ակադեմիական վարչության նախագահ պրոֆ. Ռոջեր Սմիթը եւ ուրիշներ:

**Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆ**

ԱԶԳ

## Միջազգային

Թուրքիայի խորհրդարանական ընտրություններում Էրդողանի կուսակցության հաղթանակն այնքան էլ ոգեւորություն չէր առաջացրել Ադրբեջանում, ասես դա «Եվրոտեսիլում» իրենց երկրորդ հաջողությունն էր: Ամենատարբեր տրամաչափի պաշտոնյաներ, քաղաքական գործիչներ, նույնիսկ հոգեւոր առաջնորդ Փաշազադեն շտապեցին շնորհավորել «մայր» երկրի վարչապետին՝ «կանխատեսված տպավորիչ հաղթանակի կապակցությամբ»:

Թուրքական կողմը, սակայն, զեղումների չտրվեց: Մինչ Բաքվում սպասում էին, որ արտասահմանյան իր առաջին ուղեւորությունն Էրդողանը կանի Ադրբեջան, վերջինս սառնասրտորեն որոշում ընդունեց նախ այցելել Եգիպտոս, ապա «ավելի ուշ՝ Հյուսիսային Կիպրոս եւ Ադրբեջան»:

Ինչպես տեսնում ենք, Էրդողանը Թուրքիայի արտաքին քաղաքականության օրակարգում Ադրբեջանին վերապահում է երրորդական «կարեւորություն»: Այսինքն, բոլորովին էլ չի կարեւորում «ավագ եւ կրտսեր եղբայրների քայլերի համակարգումը», ինչի մասին նրան ակնարկել էր Իլհամ Ալիեւը խորհրդարանական ընտրություններից հետո հղած շնորհավորական ուղերձում:

Ինչո՞ւ է Էրդողանը մեկնում Եգիպտոս եւ ինչո՞ւ է ծրագրում ելույթ ունենալ «Թահրիր» հեղափոխական հրապարակում՝ սա մեծ քաղաքականության ոլորտի խնդիր է: Բավական է ասել, որ նրան չի հաջողվել խորհրդարանում ապահովել այնպիսի ներկայացվածություն, որը թույլ կտար առանց այլ ուժերի աջակցության սահմանադրություն փոխել եւ եւս «մեկ քայլ անել դեպի Եվրոմիություն»: Իսկ մինչ այդ Թուրքիա էր այցելել Ֆրանսիայի նախագահ Սարկոզին եւ այդ երկրի «հայացքն ուղղել դեպի արեւելք», որտեղ իրավիճակը բարդ է:

Էրդողանն, այսպիսով, փորձում է կանգնել արաբական հեղափոխական զարթոնքը խորհրդանշող «Թահրիր» հրապարակում եւ ակնարկել, որ իր երկիրը սատարում է Մերձավոր Արեւելքի բարեփոխումներին: Նախագահ Գյուլն էլ իր հերթին է ասել, որ Թուրքիան «պատրաստվում է ճանաչել Պաղեստինի անկախությունը»: Այդ մասին գուցե կխոսի նաեւ Էրդողանը: Բնականաբար, նրա հարձակումների թիրախ կարող է դառնալ «սիոնիստական ռեժիմը»:

Խնդիրն այն է, սակայն, որ վերջինիս հետ բավական սերտ կապեր ունի Ադրբեջանը, որն էլ համաձայնվել է Բաքվում Իսրայելի դեսպանության բացմանը: Եվ տրամաբանական է, որ Իսրայելի հետ հակասությունների սրման ճանապարհին ընտրած Էրդողանը չէր կարող նախ Ադրբեջան այցելել, ապա՝ Եգիպտոս: Այդ դեպքում արաբական աշխարհը պարզապես չէր հավատա Պաղեստինի դատը պաշտպանելու Թուրքիայի «պատրաստակամությանը»:

Շատ հետաքրքրական է, որ Էրդողանը մտադրվել է լինել նաեւ Կիպրոսի թուրքական հատվածում, որը միջազգային հանրության կողմից ճանաչված չէ: Եվրոմիությանը Թուրքիայի անդամակցության նախապայմաններից մեկն էլ Կիպրոսի հյուսիսից թուրքական օկուպացիոն ուժերի դուրսբերումն ու կղզի-պետության խաղաղ վերամիավորումն է:

Թուրքիան, սակայն, ոչ միայն չի ընդառաջում եվրոպական հանրության հորդորներին, այլեւ ավելի է փորձում «օրինականացնել Կիպրոսի թուրքական հանրապետության գոյությունը»: Մեծ հաշվով, իհարկե, այդ ուղեգիծն է պաշտպանում նաեւ Ադրբեջանը, որը ոչ պաշտոնական, բայց բավական խորացած կապեր ունի այդ «երկրի» հետ: Բաքուն, սակայն, զգուշանում է դրանք օրինականացնելուց՝ հասկանալի պատճառներով:

Էրդողանի՝ Կիպրոսի հյուսիսային հատված կատարելիք այցը տեղավորվո՞ւմ է, արդյոք, միջազգային իրավունքի եւ դիվանագիտական հարաբերությունների պրակտիկայի շրջանակներում: Միանշանակորեն՝ ոչ: Եվ դա Թուրքիայում հազիվ թե չեն հասկանում: Այդուհանդերձ, «թուրքական աշխարհի առաջնորդը» մարտահրավեր է նետում միջազգային հանրությանը: Բայց այն առաջին հերթին հարված է թուրք-ադրբեջանական համերաշխությանը: Քանի որ Կիպրոսի հյուսիսային հատված այցելելով Էրդողանը կարծես Ադրբեջանին ակնարկում է, որ մտադիր չէ հանուն վերջինիս քննահաճույքի զոհել իր առարկայական շահը:

# Ադրբեջան. հունիսյան հիասթափություն

Միջազգային հարաբերություններում «Թուրքիայի եւ Ադրբեջանի ջանքերի հետագա համադրման անհրաժեշտության» մասին է նաեւ ասված Էրդողանին հղած Իլհամ Ալիեւի ուղերձում: Իսկ ադրբեջանական խորհրդարանականներից մեկը, անշուշտ չափազանց ոգեւորված լինելով սեփական երկրի «կարեւորության» մասին առասպելից, նույնիսկ շտապել էր բավական գռեհիկ տոնով ասել, որ «Անկարան հասկացել է, որ Ադրբեջանի հետ ռազմավարական համագործակցությունն այլընտրանք չունի»:

Էրդողանի պատասխանը ցինիկորեն արդարացի էր. Թուրքիայի համար այլընտրանք չունի դեպի «արեւելք շրջվելու» եւ «Կիպրոսի թուրքական հանրապետությանը» սատարելու հրամայականը: Դրանք այն լծակներն են, որ նրան պետք են մեծ քաղաքականության մեջ իր տեղը գտնելու համար: Իսկ Ադրբեջա՞նը:

Երբ «պտորինածինը» զզվեցնելու չափ կպչուն է դառնում, «հայրը» նրան պարզապես ապտակում է: Ահա եւ Էրդողանն ապտակեց Ադրբեջանին:

**ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ**

# Բաքվում ոստիկանությունն իրականացրել է 60 ձերբակալություն

## *Ձերբակալվածների մեջ է հայտնվել «Մուսաֆաթ» կուսակցության նախագահի որդին՝ Թուրգութ Ղամբարը*

Որքան էլ ադրբեջանական իշխանությունները կանխեն հակակառավարական ամեն մի ցույց, Ադրբեջանում կրքերը չեն հանդարտվում: Կիրակի Բաքվում ընդդիմությունը ցույց կազմակերպելու նոր փորձ է արել՝ նախապես հայտարարելով, որ դա տեղի կունենա Նարիմանովի անվան այգում: Ոստիկանությունը այգու մոտակայքում, ըստ թուրքական «Դունյա բյուլթենի» լրատվական գործակալության, անվտանգության արտակարգ միջոցառումների է դիմել՝ փակելով այգի դուրս եկող բոլոր փողոցները: Այսպիսով, հանրահավաքը չի կայացել:

Թուրքական գործակալության վկայությամբ, սա ապրիլից ի վեր Բաքվում հանրահավաք անցկացնելու 3-րդ փորձն է, որը նախորդ երկուսի նման ապարդյուն է անցել: Ոստիկանությունը ձերբակալել է ընդդիմադիր այն գործիչներին, որոնք հայտարարություն են արել մամուլում: Նրանցից «Մուսաֆաթ» կուսակցության մի ներկայացուցիչ նախքան ձերբակալվելը ասել է, որ Ադրբեջանում ընդդիմությունը պահանջում է ժողովրդավարական ընտրություններ, սակայն Ադրբեջանը, ի պատասխան դրան, ընդունում է ոստիկանական պետության կերպարանք:

«Մուսաֆաթի» փոխնախագահ Գուլաղա Ասլանլին APA գործակալության հարցերին պատասխանելիս ասել է, որ ընդդիմադիր կուսակցությունների Բաքվի տարբեր վայրերում կազմակերպած ցույցերի ժամանակ ոստիկանությունը ձերբակալել է շուրջ 60 գործիչների, որոնց թվում է իրենց կուսակցության նախագահ Իսա Ղամբարի որդին՝ Թուրգութ Ղամբարը: Նրան հավելում է «Դունյա բյուլտենի» կայքէջը. «Ուշագրավ է, որ ձերբակալվածների մեծամասնությունը կանայք են»:

Հ. Չ.

# «Էրբասը» ներկայացրել է գերձայնային «մաքուր» օդանավի նախագիծ

Երեկ Փարիզի «Լը Բուրժե» օդանավակայանում բացվեց միջազգային ավանդական ավիասալոնը, որին այս անգամ մասնակցում է 2100 ընկերություն: Ցուցահանդեսի բացման նախօրեին եվրոպական ավիաշինության հսկա «Էրբաս» ընկերությունը արդեն ներկայացրել էր իր նոր նախագիծը: Խոսքը Zero Emission Hypersonic Transportation (Zehst) գերձայնային օդանավի մասին է, որն աչքի է ընկնում վնասակար նյութերի նվազագույն արտանետումներով:

Ֆրանսպրեսի տվյալներով, Zehst-ը վերուլացքի ժամանակ օգտագործելու է կենսավառելիք, իսկ ստրատոսֆերայում՝ հրթիռային վառելիք: Նախատեսվում է, որ Zehst-ը թռչելու է 32 կմ բարձրության վրա (ներկայումս մարդատար օդանավերը թռչում են 10 կմ բարձրության վրա):

Zehst-ը կարող է 50-100 ուղեւոր Փարիզից Տոկիո հասցնել 2,5 ժամում:

«Էրբասը» հույս ունի նոր օդանավի նախօրինակը պատրաստել մինչեւ 2020 թ.: Zehst-ը առեւտրային շահագործման կհանձնվի մոտավորապես 2050-ին: Եվրոպացիները նախագիծը մշակում են ճապոնացիների հետ համատեղ:

20-րդ դարում գերձայնային մարդատար օդանավի ստեղծման փորձեր արվել են: Առաջին նախագիծը ֆրանս-բրիտանական «Կոնկորդն» էր, որի թռիչքները լիովին դադարեցվեցին 2000-ականների սկզբներին: Խորհրդային «Տու-144»-ը թռիչքներ կատարեց 1968-1978 թթ.:

**ԴԱՄԱՍԿՈՍ**

# Ասադը խոսեց Սիրիայի պատմության մեջ «ամենալուրջ ճգնաժամի» մասին

## *Նա խոստացավ լուծել ցավոտ խնդիրները*



**Սիրիայի նախագահ Բաշար Ասադը հունիսի 20-ին երկրի բնակչությանն ուղղված ելույթ ունենալով՝ վերջին իրադարձությունները բնութագրել է որպես անկախ Սիրիայի պատմության «ամենալուրջ ճգնաժամ»:**

**«Մենք ապրում ենք կրիտիկական ժամանակաշրջան: Հեղվեց անմեղների արյունը: Դա մեծ կորուստ է ոչ միայն նրանց մերձավորների, այլեւ ամբողջ Սիրիայի համար», ասել է նախագահը, որի խոսքերը մեջբերում է newsru.co.il կայքը:**

**Նախագահն օրինական է համարել հակակառավարական ելույթների մասնակիցների մեծամասնության պահանջները: Սակայն, նրա կարծիքով, ցույցերի ժամանակ տոն էին տալիս փոքրամասնություն կազմող քրեական տարրերը եւ մոլեռանդ կրոնավորները, որոնք «ուզում էին երկիրը թաղել քաոսի մեջ»: Ասադի խոսքերով, ամենաարդիական զենքով զինված հենց նման ահաբեկիչներն էին, որ կոտորած սարքեցին Ջիսր ալ Շուգուրում:**

**«Նրանք ուզում էին սեւացնել մեզ միջազգային ընկերակցության աչքին եւ հրահրել օտարերկրյա միջամտություն: Նման իրավիճակում մենք ստիպված էինք ուժ կիրառել», ավելացրել է նախագահը:**

**Ասադի խոսքերով, անկարգությունների ընթացքում ձերբակալվել է 64 հազար մարդ: Հազարավոր մարդկանց արդեն ներում է շնորհվել: Ասադը պատրաստակամություն է հայտնել ընդլայնելու համաներման պայմանները:**

**Նախագահի կարծիքով, ժողովրդի մեջ առավել մեծ դժգոհություն են առաջացնում կաշառակերությունը, անհավասարությունը եւ ցածր աշխատավարձը: Նա խոստացել է լուծել այդ ցավոտ խնդիրները:**

**Հարանուն միջազգային ճնշմանն ի պատասխան՝ Ասադը հայտարարել է, որ Սիրիան արտաքին թշնամական ուժերի դավադրության զոհն է: Նա հավաստիացրել է, որ թշնամիներին կտրվի հակահարված:**

**Պ.Ք.**

# Ռ. Գեյթս. «Այո, Աֆղանստանում բանակցում ենք թալիբների հետ»

**ԱՄՆ պաշտպանության նախարար Ռոբերտ Գեյթսը հաստատել է այն լուրերը, որ ամերիկացիներն Աֆղանստանում «նախնական» բանակցություններ են վարում թալիբների հետ: BBC-ին տված հարցազրույցում նա խոստովանել է, որ «այս բոլոր պատերազմներին կարելի է վերջ դնել» միայն քաղաքական ճանապարհով:**

**Առաջին անգամն է, որ ԱՄՆ-ը պաշտոնապես խոստովանում է թալիբների հետ երկխոսության գոյության փաստը: Նախօրեին Աֆղանստանի նախագահ Համիդ Կարզայը ինքն էր հայտարարել հաշտության բանակցություններ սկսվելու մասին:**

**Արդեն հուլիսին պետք է սկսվի Աֆղանստանից 97 հազար ամերիկացի զինծառայողների դուրսբերումը: Նախատեսվում է մինչեւ 2014 թ. երկրի անվտանգության ապահովման գործն աստիճանաբար հանձնել Աֆղանստանի հատուկ ծառայություններին:**

**«Բանակցային նախաձեռնությունը բխում է մի շարք երկրներից, այդ թվում՝ ԱՄՆ-ից», ասել է Գեյթսը CNN-ին տված հարցազրույցում, չնշելով կոնկրետ երկրների անուններ:**

**Մինչեւ վերջերս թալիբների ղեկավարությունը համաձայն էր հաշտության բանակցություններ սկսել միայն օտարերկյա զորքերի դուրսբերումից հետո եւ միայն Աֆղանստանի կառավարության ներկայացուցիչների հետ: Բայց այժմ թալիբների դիրքորոշումը սկսել է փոխվել:**

**Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչները կարծում են, որ Ուսամա բեն Լադենի սպանությունից հետո թալիբները պետք է որ մասնակից դառնան քաղաքական գործընթացներին:**

**Պ.Ք.**

# Բոստոնում մահացել է Ելենա Բոնները



**Բոստոնում մահացել է ակադեմիկոս Անդրեյ Սախարովի այրին՝ հասարակական գործիչ, իրավապաշտպան Ելենա Բոնները: Նա 88 տարեկան էր: Այդ մասին հաղորդում է «Ազատություն» ռադիոկայանը:**

**Ելենա Գեորգիեւնա Բոնները ծնվել էր Թուրքմենստանի ԽՍՀ-ում: Հորը գնդակահարել էին 1938-ին, մորը դատապարտել էին 8 տարվա տաժանակրության: Երկուսին էլ արդարացրել էին 1954-ին: 1940-ին Ելենան ընդունվել էր Լենինգրադի Գերցենյան ինստիտուտ: Պատերազմի տարիներին բանակում սանիտար էր, ծանր վիրավորվել էր: Պատերազմից հետո սովորել էր բժշկական ինստիտուտում: 1960-ականներին սկսել էր շփվել իրավապաշտպանների հետ: 1970-ին մի դատավարության ժամանակ ծանոթացել էր Անդրեյ Սախարովի հետ: 1972-ին նրանք ամուսնացել էին (Սախարովը նրա երկրորդ ամուսինն էր): Նույն թվականին Բոնները քաղաքական համոզմունքներից ելնելով լքել էր ԽՄԿԿ-ն: 1970-ականներին ստեղծել էր քաղբանտարկյալների զավակների օգնության հիմնադրամ, ստորագրել Մոսկվայի Հելսինկյան խմբի հիմնադիր փաստաթուղթը:**

**1975-ին Օսլոյում ամուսնու ներկայացուցիչն էր Նոբելյան մրցանակի շնորհման ժամանակ: 1980-ին Սախարովի հետ աքսորվել էր Գորկի: 1989-ին Սախարովի մահից հետո ղեկավարում էր նրա անվան հիմնադրամը: Վերջին տարիներին ապրում էր ԱՄՆ-ում:**

**Ելենա Բոների կամքի համաձայն, նրա աճյունասափորը կթաղվի Մոսկվայի Վոստրյակովյան գերեզմանատանը՝ ամուսնու, մոր եւ եղբոր կողքին:**

**Պ.Ք.**

# Մշակոյթ

# «Երեւան իմ սէր»

15 Յունիս, 2011-ին, Լոնդոնի Buckingham պալատի մէջ տեղի ունեցաւ «Երեւան իմ սէր» բարեսիրական ծրագրին նուիրուած շքեղ կալա համերգ-ճաշկերոյթ մը, հովանաւորութեամբ Նորին արքայական մեծութիւն իշխան Չարլզի, կազմակերպութեամբ ու մեկենասութեամբ «Երեւան իմ սէր» ծրագրի հիմնադիր, Հայաստանի նախկին վարչապետ, Դոկտ. Արմէն Սարգիսեանի:



Կալա համերգ-ճաշկերոյթին մասնակցեցան Հայաստանի Հանրապետութեան վարչապետ Տիգրան Սարգսեան, Երեւանի քաղաքապետ Կարէն Կարապետեան, Շառլ Ազնաւուր, Հ.Բ.Ը.Մ.ի նախագահ Պերճ Սեդրակեան, ազգային բարերարներ՝ Վաչէ Մանուկեան, Հայկ Տիտիզեան, Անգլիոյ առողջապահութեան նախկին նախարար, մեծանուն բժշկապետ, Լորդ Արա Դարզի, բազմաթիւ հայ եւ օտար նուիրատուներ Հայաստանէն, Ռուսաստանէն, Միացեալ Նահանգներէն, Եւրոպայի տարբեր երկիրներէն, Միջին Արեւելքէն, մինչեւ անգամ Ղազախստանէն խումբ մը հիւրեր՝ գլխաւորութեամբ նախագահի դուստր՝ Դոկտ. Դարիկա Նազարբաեւայի:



Ընդունելութեան գեղարուեստական բաժնին իրեց մասնակցութիւնը բերին մեծահամբաւ «Բախ» երգչախումբը, Լոնդոն Ֆիլհարմոնիա նուագախումբը, համաշխարհային համբաւ վայելող արուեստագէտներ՝ Մաքսիմ Վանկերովը (ջութակահար), Ռենէ Ֆլեմինգը (երգչուհի ), Դէյվիդ Հիլը (խմբավար), Սերգէյ Սմբատեանը (խմբավար) :

Յայտագրը կը բաղկանար Handel-ի, Mozart-ի, Bernstein-ի, Կոմիտասի եւ Եկմալեանի գործերէն, որոնց բոլորն ալ կատարուեցան մեծատաղանդ արուեստագէտներէ պահանջուած բարձրորակ արուեստով, խոր ըմբռնումով եւ վարպետութեամբ:

«Բախ» երգչախումբը, ի միջի այլոց, երգեց նաեւ Եկմալեանի «Սուրբ Սուրբ»-ն ու «Հայր մեր»-ը, հայերէն անթերի առոգանութեամբ:

Մաքսիմ Վանկերով, նուագախումբի մասնակցութեամբ եւ Ս. Սմբատեանի ղեկավարութեամբ, մեծ վարպետութեամբ կատարեց Կոմիտասի «Կռունկ»-ը, արժանանալով ունկնդիրներու բուռն ծափերուն:

Համերգի աւարտին, Դոկտ. Արմէն Սարգիսեան շնորհակալութիւն յայտնեց գահաժառանգ իշխանին եւ արքայական ընտանիքին իրենց բարեացակամ վերաբերմունքին եւ «Dumfries House-Երեւան Իմ Սէր» ծրագրին բերած օժանդակութեան համար:



Այնուհետեւ Դոկտ. Սարգիսեան անդրադարձաւ անգլօ-հայկական բարեկամական կապերուն եւ որպէս օրինակ նշեց Կիլիկիոյ Լեւոն Բ. թագաւորի եւ Անգլիոյ Richard the Lionheart-ի (Ռիչարդ Առիւծասիրտ) զինուորական համակործակցութիւնը Սալահէդդինի դէմ մղուած կռիւներու ժամանակ 1191-ին: Արմէն Սարգիսեան յոյս յայտնեց, որ մօտ ապագային հայ ժողովուրդը հաճոյքն ու պատիւը կ՚ունենայ Նորին արքայական մեծութիւնը ողջունելու Հայաստանի մէջ:

Իշխան Չարլզ իր ելոյթին մէջ, ի միջի այլոց նշեց հետեւեալը.

«Երախտագիտութիւնս կը յայտնեմ ձեր բոլորին, յատկապէս Արմէն Սարգիսեանին եւ տիկնոջը, Նունէին, առանց որոնց այս սքանչելի երեկոյթը տեղի պիտի չունենար: Այս երեկոն, անշուշտ, նաեւ առիթ մըն է աւելի եւս ամրապնդելու Հայաստանի եւ Միացեալ Թագաւորութեան միջեւ գոյութիւն ունեցող զօրաւոր կապերը: Ես վաղուց հիացած եմ Հայաստանով, որպէս աշխարհի հնագոյն քրիստոնեայ երկիրը, որ ունի իր եզակի ճարտարապետական ժառանգութիւնը: Խիստ քաջալերիչ է տեսնել, որ «Երեւան իմ սէր» ծրագիրը կը շարունակէ պահպանել աւանդական հայկական ճարտարապետութիւնն ու ճարտարապետական արուեստը»:

Համերգէն յետոյ տեղի ունեցաւ ճաշկերոյթ, որուն մասնակցեցան շուրջ 250 հիւրեր: Բացի ընթրիքի ընթացքին մատուցուած ընտիր գինիներէն, ճաշկերոյթի աւարտին ներկաներուն հրամցուեցան «Արարատ» հայկական կոնեակը, ինչպէս նաեւ Ռազմիկ Թեվոնեանի նուիրած եւ «Երասխ» գինեգործարանի արտադրած քաղցր գինին:

Դոկտ. Արմեն Սարգիսեան հանդերձ ընտանեօք եւ գործակիցներով արժանի է բարձ գնահատանքի, ո՛չ միայն իր կատարած հայրենանուէր կարեւոր աշխատանքին, այլ նաեւ անոր հետեւանքով մեր ժողովուրդի պատմութիւնն ու մշակութային արժէքները համաշխարհային շրջանակներուն ծանօթացնելուն համար: Պատահական չէ, որ իշխան Չարլզը իր ելոյթին մէջ ո՛չ միայն բարձր գնահատեց անոնց բարեգործական աշխատանքը, այլ նաեւ անդրադարձաւ եւ գնահատական բարձր խօսքեր ըսաւ Հայաստանի եւ հայ մշակոյթի մասին:

ԱՄԱՏՈՒՐ ԿԻՒՋԵԼԵԱՆ

Լոնդոն, 18 յունիս, 2011

# Ճապոնիայի երկրաշարժի զոհերի հիշատակին

Վաղը՝ հունիսի 22-ին, ժամը 18:00-ին Եղիշե Չարենցի տուն-թանգարանում հայ-ճապոնական «Հիկարի» կենտրոնը եւ Եղիշե Չարենցի տուն-թանգարանը կազմակերպում են հայ-ճապոնական գրական-մշակութային մերձեցման երեկո «Նվիրում» խորագրով: Երեկոն նվիրվում է Ճապոնիայում երկրաշարժի զոհերի հիշատակին:

Երեկոյի ընթացքում ցուցադրվելու է Չարենցի անձնական իրերից՝ 17-րդ դարի Ուտագավա դպրոցի ճապոնական գրավյուրաների փոքրիկ ցուցահանդես, Բուդդայի արձանիկներ եւ ճապոնական հնագույն խաղ, հայ ժամանակակից նկարիչ Վարդան Գաբրիելյանի «Նվիրում» գեղանկարների շարքը, որը ստեղծվել է երկրաշարժի տպավորության տակ: Չարենցի եւ ճապոնացի բանաստեղծների թանկաների ընթերցմամբ հանդես կգան ՀՀ ժողովրդական արտիստ Ազատ Գասպարյանը եւ ՀՀ վաստակավոր արտիստուհի Սիլվա Յուզբաշյանը:

«Հիկարի» կենտրոնը կներկայացնի թատերականացված տեսաշար «Գարուն, Ամառ, Աշուն, Ձմեռ» խորագրով:

Միջոցառմանը ներկա են լինելու Այկիդոյի համաշխարհային ֆեդերացիայի I-ին քարտուղար, 7-րդ Դան Շիգերու Սուգավարան, ճապոնացի հյուրեր, մի շարք բարձրաստիճան հյուրեր, մտավորականներ:



# Գյումրեցիները պահանջում են վերադարձնել որմնանկարները

«Հենարան» ակումբում երեկ կրկին քննարկում էին նշանավոր նկարիչ Մինաս Ավետիսյանի որմնանկարների վերականգնման հարցը: Այս անգամ բանախոսներն այն մարդիկ էին, որոնց շրջանում նկարները Գյումրիից հեռացնելն առանձնակի դժգոհություն է առաջ բերել: Գյումրու ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի խորհրդի նախագահ **Լեւոն Բարսեղյանը** նշեց, որ մշակույթի նախարարությունն «անբարո քաղաքականություն է վարում. նկարները փրկելու անվան տակ դրանք դուրս է հանում իրենց բնօրրանից»:

Հիշեցնենք, որ Մինաս Ավետիսյանի «Երկանք» ու «Թել են մանում» որմնանկարները բերվել են Երեւան: Որմնանկարներն այստեղ վերականգնվելու են ու տեղադրվելու են «Զվարթնոց» օդանավակայանում: Իսկ վերականգնման ծախսերը հոգալու է օդանավակայանի հավատարմագրային կառավարիչ, արգենտինահայ գործարար Էդուարդո Էռնեկյանը:

Վերջերս որմնանկարների վերականգնման վերաբերյալ խոսել էին նաեւ մշակույթի նախարարությունից Սոնա Հարությունյանն ու Մինաս Ավետիսյանի որդին՝ Արման Ավետիսյանը: Վերջինս մեղադրել էր գյումրեցիներին, թե նրանք որմնանկարների հետ բարբարոսաբար են վարվել: Սակայն երեկ «Հենարանի» բանախոսները հերքեցին այդ կարծիքները՝ նշելով, որ գյումրեցիները որմնանկարներին նորմալ են վերաբերվել: Իսկ Գյումրու պատմամշակութային անշարժ հուշարձանների ու շարժական արժեքների պահպանության քաղաքային նախաձեռնող խմբի անդամ **Հասմիկ Մելքոնյանն** էլ նշեց. «Լենինականը Մինասին տալիս էր պատվերներ, որոնց միջոցով Մինասն ընտանիք էր պահում: Հենց այդ ընտանիքում մեծանում էր Արման Ավետիսյանը, որն այժմ գործիք է դարձել մշակույթի նախարարության եւ Հասմիկ Պողոսյանի ձեռքում»:

Մինաս Ավետիսյանի որմնանկարները Գյումրի վերադարձնելու կապակցությամբ կազմակերպվել է ստորագրահավաք: Ասուլիսի ընթացքում Հասմիկ Մելքոնյանը, Լեւոն Բարսեղյանն ու «Շիրակ կենտրոն» կազմակերպության նախագահ **Վահան Թումասյանը** նշեցին, որ իրենք կառավարությունից պահանջում են փոխել որոշումն ու որմնանկարները վերադարձնել Գյումրի:

Հիշեցնենք, որ Գյումրիի քաղաքապետարանն էլ օրերս տարածել էր հայտարարություն, որտեղ նշված էր. «Այսօր էլ պատրաստ ենք տրամադրել անհրաժեշտ միջոցներ որմնանկարների վերականգնման համար, միայն թե դրանք չտրվեն իրենց արմատից՝ Գյումրիից, որտեղ ծնվել ու ապրել են»:

Ի.Պ.

***Խմբ. կողմից**.- Մեր կարծիքով, ՀՀ մշակույթի նախարարությունը ճիշտ է վարվել Մինասի երկու որմնանկարները «Զվարթնոցին» մշտական ցուցադրության հանձնելով: Միակ սխալն այն է, որ դրանց Գյումրիից Երեւան տեղափոխությունը, ըստ տվյալների, կատարվել է չհամաձայնեցված՝ տեղի մտավորականության հետ: «Զվարթնոցը» մեր երկրի առաջին դարպասն է, եւ լավ է, որ այցելուն կամ ուղեւորը այնտեղից սկսած առնչվեն մեր մեծ նկարչի արվեստին: Զուգահեռը, որն այս պահին մեր միտքն է գալիս, Նյուարքի (ԱՄՆ) օդանավակայանն է, որտեղ շուրջ 70 տարուց ի վեր ցուցադրվում են մեր մեծ ազգակցի՝ Արշիլ Գորկու որմնանկարները, բոլորիս հիացմունքն ու հպարտությունը շոյելով: Միայն մեկ հավելյալ պայման պետք է դնել ազգային բարերար պրն Էռնեկյանի առաջ՝ վերականգնել նաեւ մեծն Մինասի Գյումրիում գտնվող մյուս որմնանկարները եւ ապահովել դրանց ցուցադրումը տեղում:*

# Orange-ը Երաժշտության տոնի գլխավոր հովանավորն է

*Մեկնարկեց Orange Music-ը*



**Երեւան, 20 հունիսի, 2011թ.: Հայաստանում Ֆրանսիայի դեսպանության եւ ՀՀ մշակույթի նախարարության նախաձեռնությամբ հունիսի 21-ին Հայաստանում արդեն վեցերորդ անգամ կնշվի Երաժշտության տոնը: Արդեն երկրորդ տարին է, ինչ Երաժշտության տոնին միանում է Orange-ը՝ որպես գլխավոր հովանավոր:**

**«Լինելով երաժշտական բրենդ եւ ցանկանալով նոր երաժշտական տրամադրություն նվիրել երեւանցիներին՝ Orange-ը սիրով աջակցում է այս տոնին, որի փիլիսոփայությունն է երաժշտությունը համերգասրահներից դուրս բերել փողոց, եւ սկսնակ երաժիշտներին ու կատարողներին նույնպես հնարավորություն տալ հանդես գալ հանրության առջեւ», ասաց Orange-ի գլխավոր տնօրեն Բրունո Դյութուան:**

**Արդեն ավանդական դարձող Երաժշտության տոնն առիթ հանդիսացավ Orange-ի համար մեկնարկելու «Orange Music»-ը, որն այսուհետեւ ծառայելու է որպես միասնական հարթակ եւ միավորելու է Orange-ի բոլոր երաժշտական նախագծերը: Սա նշանակում է, որ այսուհետեւ որեւէ տեղ տեսնելով Orange Music նշանը՝ կարելի է վստահ լինել, որ Orange-ը հերթական անակնկալն է պատրաստել երաժշտասերների համար:**

**Երաժշտության տոնի գործընկերներից են նաեւ Երեւանի քաղաքապետարանը եւ «Գաֆէսճյան» արվեստի կենտրոնը:**

## Երաժշտության տոնի մասին

**Երաժշտության տոնը սկիզբ է առել 1982թ. հունիսի 21-ին Ֆրանսիայի մշակույթի նախարարության նախաձեռնությամբ: Երաժշտության տոնն այսօր համաշխարհային մեծության առաջին երաժշտական միջոցառումն է եւ տոնվում է աշխարհի ավելի քան 110 երկրներում եւ 430 քաղաքներում: Այն ժողովրդական տոն է եւ նպատակ ունի հանրամատչելի դարձնել երաժշտական փորձն ու բոլոր սերունդներին հաղորդակից դարձնել երաժշտության տարբեր դրսեւորումներին, ինչպես նաեւ հնարավորություն տալ պրոֆեսիոնալ եւ ոչ պրոֆեսիոնալ կատարողներին ինքնադրսեւորվել հանրատարածից համերգների միջոցով:**

# Հայ բռնցքամարտիկներից երեքը շարունակում են պայքարը

Անկարայում ընթացող բռնցքամարտի Եվրոպայի առաջնությունում մեկնարկի դուրս եկած հայ բռնցքամարտիկներից երեքը հաղթանակով ավարտեցին իրենց մենամարտերը: Մինչեւ 56 կգ քաշային կարգում Հովհաննես Բաչկովը 18-11 հաշվով հաղթեց չեխ Պատրիկ Վելկիին: Նրա հաջորդ մրցակիցը կլինի ռուսաստանցի Դմիտրի Պոլյանսկին:

Հաղթանակով մեկնարկեց նաեւ Պեկինի օլիմպիադայի բրոնզե մեդալակիր, Եվրոպայի գործող չեմպիոն Հրաչյա Ջավախյանը (60 կգ), նրա մրցակիցը լիտվացի Ռիկարդաս Կունկաիտիսն էր, որին հայ բռնցքամարտիկը պարտության մատնեց 11-7 հաշվով: Ջավախյանը հաջորդ փուլում կմրցի Բելառուսը ներկայացնող Ռամաշկեւիչի հետ:

Պայքարը շարունակում է նաեւ մինչեւ 75 կգ քաշային Արթուր Խաչատրյանը: Նա մեծ առավելությամբ պարտության մատնեց ալբանացի Ալբան Բերմետային (24-5): Հաջորդ փուլում Արթուրը կմենամարտի մակեդոնացի Ֆաթլում Ժուտայի հետ:



Ցավոք, մեր բռնցքամարտիկներից երեքն արդեն թողել են ասպարեզը: Մինչեւ 52 կգ քաշային կարգում Նարեկ Աբգարյանը հաղթելով ռումինացի Վալենտին Կիոակային (13-11), 2-րդ փուլում զիջեց բուլղարացի Ստեֆան Իվանովին (10-19):

Անհաջողության մատնվեց նաեւ Եվրոպայի նախկին չեմպիոն Հովհաննես Դանիելյանը (49 կգ), որը համառ մրցապայքարում, ընդամենը մեկ միավորի տարբերությամբ (13-14) պարտվեց իսպանացի Ժոզե Կելվինին: Պայքարից դուրս մնաց նաեւ մինչեւ 69 կգ քաշային Սամվել Մաթեւոսյանը, որը պարտություն կրեց Բելառուսը ներկայացնող Մահամեդ Նուրուձինաուին:

# Առաջին եռյակից հաղթեց միայն «Փյունիկը»

Ֆուտբոլի Հայաստանի առաջնության 13-րդ տուրում առաջատար եռյակից հաղթեց միայն երկրի չեմպիոն «Փյունիկը»: Հաղթանակն առաջնության հետնապահ «Արարատի» նկատմամբ հեշտությամբ չտրվեց: Հանդիպման միակ գոլը չեմպիոնը խփեց 11 մ հարվածով, որը դիպուկ իրացնելով, Էդգար Մանուչարյանը 6 գնդակով հավասարվեց առաջնության լավագույն ռմբարկու Մարկոսին: Վերջինս Գեւորգ Ղազարյանի հետ բացակայում էր թիմի կազմից, ինչը չէր կարող չանդրադառնալ փյունիկցիների գործողությունների վրա:

Մեծ հետաքրքրությամբ էր սպասվում առաջնության առաջատար «Գանձասարի» եւ «Իմպուլսի» հանդիպումը: Նախորդ տուրում 1-ին հորիզոնականը զբաղեցրած կապանցիները ձգտում էին ամրապնդվել առաջատարի դիրքում հերթական 3 միավորը վաստակելու շնորհիվ: Սակայն դիլիջանցիներին հաղթել չհաջողվեց: Դարպասները մնացին անառիկ:

«Գանձասարին» շրջանցելու եւ կրկին աղյուսակը գլխավորելու հնարավորություն ուներ «Ուլիսը», որը սեփական հարկի տակ հյուրընկալել էր «Միկային»: Խաղասկիզբը հաջող դասավորվեց ուլիսցիների համար եւ արդեն 15-րդ րոպեին Արտյոմ Ադամյանը գրավեց մրցակցի դարպասը: Սակայն «Միկայի» ֆուտբոլիստներին մինչեւ ընդմիջում հաջողվեց վերականգնել հավասարակշռությունը: Աչքի ընկավ թիմի նորեկ Սեմյոն Մուրադյանը՝ բացելով գոլերի հաշիվը «Միկայում»:

Երկրորդ խաղակեսում ավելի ակտիվ էին «Միկայի» ֆուտբոլիստները, որոնք էլ ի վերջո խփեցին հաղթական գնդակը: Փոխարինման մտած չինացի Դոնգ Ֆանգժուն խաղավարտից 3 րոպե առաջ գեղեցիկ հարվածով հաղթանակ պարգեւեց իր թիմին (2-1): Այսպիսով, Էդուարդ Մարգարովը «Միկայի» գլխավոր մարզչի պաշտոնում իր 3-րդ նորամուտը նշեց հաղթանակով:

Մրցաշարային աղյուսակում հարեւաններ «Շիրակի» եւ «Բանանցի» մրցավեճում գրանցվեց ոչ-ոքի՝ 1-1: «Շիրակին» արդեն 8 տարի է, ինչ չի հաջողվում հաղթել





«Բանանցին» առաջնության 31 հանդիպումներում: Այս անգամ էլ թեեւ առաջինը շիրակցիները բացեցին հաշիվը (Կարեն Ն. Խաչատրյան), սակայն հյուրերը կարողացան վերականգնել հավասարակշռությունը: «Բանանցին» պարտությունից փրկեց Արսեն Բալաբեկյանը:

**Մրցաշարային աղյուսակ**

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Գանձասար | 13 | 7 | 5 | 1 | 17-6 | 26 |
| 2. Փյունիկ | 13 | 7 | 3 | 3 | 21-14 | 24 |
| 3. Ուլիս | 13 | 7 | 3 | 3 | 18-11 | 24 |
| 4. Միկա | 13 | 5 | 3 | 5 | 15-13 | 18 |
| 5. Իմպուլս | 13 | 5 | 3 | 5 | 16-15 | 18 |
| 6. Շիրակ | 13 | 3 | 4 | 6 | 11-15 | 13 |
| 7. Բանանց | 13 | 2 | 6 | 5 | 15-20 | 12 |
| 8. Արարատ | 13 | 1 | 3 | 9 | 8-27 | 6 |

**Ռմբարկուները**

| | | |
|---|---|---|
| Մարկոս Պիզելի | «Փյունիկ» | 6 |
| Էդգար Մանուչարյան | «Փյունիկ» | 6 |
| Բրունո Կորեա | «Բանանց» | 5 |

# Մարկոսն ու Գեւորգ Ղազարյանը կխաղան «Մետալուրգում»

ՀՀ ազգային հավաքականի եւ «Փյունիկի» ֆուտբոլիստներ Մարկոս Պիզելին ու Գեւորգ Ղազարյանը եռամյա պայմանագիր են կնքել Դոնեցկի «Մետալուրգի» հետ: Նրանք թիմի կազմում Ուկրաինայի նոր առաջնությանը նախապատրաստվում են Ավստրիայում: Ինչպես ակումբի պաշտոնական կայքին տեղեկացրել է «Մետալուրգի» մարզական տնօրեն Վարդան Իսրայելյանը, «Փյունիկի» ֆուտբոլիստների նորամուտը «Մետալուրգում» սպասվում է այսօր հունգարական «Ույպեշտի» հետ կայանալիք խաղում: Նա նաեւ նշել է, որ երկու ֆուտբոլիստների խաղային ունակություններին լավ ծանոթ են, ուստի փորձաշրջանի հարկ չկար: Նա համոզված է, որ փյունիկցիները կուժեղացնեն «Մետալուրգի» կազմը:

Եվ այսպես, եւս երկու փյունիկցիներ եվրոգավաթների խաղարկության մեկնարկի շեմին հեռացան թիմից: Ըստ «Փյունիկի» գլխավոր մարզիչ Վարդան Մինասյանի, առաջիկայում եւս երկու ֆուտբոլիս կմեկնի արտերկիր: Նրանցից մեկն ամենայն հավանականությամբ կլինի Էդգար Մանուչարյանը: «Փյունիկը» մտադիր է կազմի կորուստները լրացնել ի հաշիվ հրավիրվելիք լեգեոնականների, սակայն կյանքը ցույց է տվել, որ վերջին պահին թիմում ընդգրկվող օտարերկրացիները որպես կանոն չեն կարողանում օգտակար լինել եվրոգավաթի խաղերում: Այնպես որ «Փյունիկին» դժվար կլինի հաղթահարել չեխական «Վիկտորիայի» արգելքը:

Իսկ «Մետալուրգում» ներկայումս 3 փյունիկցիներ են ընդգրկված: Մարկոսն ու Ղազարյանը կմիանան Կառլեն Մկրտչյանին, որն ավելի վաղ էր մեկնել Դոնեցկ:

«Մետալուրգի» կազմում առաջինը հայ ֆուտբոլիստներից հանդես է եկել Արա Հակոբյանը, սակայն նա իրեն չկարողացավ դրսեւորել: «Բանանցի» մյուս երեք ֆուտբոլիստների՝ Սամվել Մելքոնյանի, Արարատ Առաքելյանի եւ Արտակ Դաշյանի տեղափոխություններն էլ «Մետալուրգ» չնպաստեցին նրանց վարպետության աճին: Նրանք այդպես էլ չկարողացան ամրապնդվել թիմում ու ստիպված էին վերադառնալ հայրենիք: Դոնեցկի թիմում խաղացել է նաեւ Եղիշե Մելիքյանը, սակայն նրա գործերն էլ հաջող չեն ընթացել:

Եվ միայն Հենրիխ Մխիթարյանն իրեն կարողացավ դրսեւորել ուկրաինական ակումբում: Նա անցկացրած 37 խաղում խփեց 12 գնդակ, աչքի ընկավ տեխնիկապես գրագետ խաղով ու վարպետությամբ եւ արդյունքում 7,5 մլն դոլարի դիմաց տեղափոխվեց Դոնեցկի «Շախտյոր»:

## ԹԵԹԵՎ ԱՏԼԵՏԻԿԱ

# Հուսադրող ելույթներ Ռեյկյավիկում

Ռեյկյավիկում անցկացված թեթեւ ատլետիկայի Եվրոպայի 3-րդ խմբի թիմային առաջնությունում հաջող ելույթներ ունեցան հայ թեթեւատլետները: Հավաքականի գլխավոր մարզիչ Միշա Հայրապետյանի գլխավորությամբ Ռեյկյավիկում հանդես եկան Հայաստանի 20 պատվիրակներ:

Մեդալների հարուստ հավաքածուով տուն կվերադառնա Ամալյա Շառոյանը: Նա հաղթող ճանաչվեց 400 մետր վազքում (54,98) վրկ եւ 400 մետր արգելավազքում (1 րոպե 40 վրկ), բրոնզե մեդալների արժանացավ 100 մետր արգելավազքում (14,61 վրկ) եւ 4x100 մետր փոխանցումավազքում, որտեղ Հայաստանի թիմը ցույց տվեց 49,26 վրկ արդյունք:

Հեռացատկի մրցումներում իրեն հիանալի դրսեւորեց Վարդան Փահլեւանյանը, որը 7,90 մետր արդյունքով կանգնեց պատվո պատվանդանի վերին աստիճանին: Գյումրեցի նիզականետորդ Մելիք Ջանոյանը 70,41 մետր արդյունքով գրավեց 2-րդ տեղը: Կապանցի եռացատկորդուհի Հայկանուշ Բեգլարյանը 12,83 մետր արդյունքով արժանացավ արծաթե մեդալի: Կանանց նիզականետորդուհիների մրցավեճում Քրիստինե Հարությունյանը հանրապետության նոր ռեկորդ սահմանեց (48,02 մետր)՝ դառնալով բրոնզե մրցանակակիր: Խոչընդոտավազքում 3000 մետր մրցատարածությունը հաղթահարելով 9 րոպե 10,03 վրկ-ում, Աշոտ Հայրապետյանը բրոնզե մեդալի արժանացավ:

Թիմային պայքարում մեր հավաքականը գրավեց 7-րդ տեղը: Ինչպես նշեց թեթեւ ատլետիկայի Հայաստանի ֆեդերացիայի գլխավոր քարտուղար Նարինե Շահբազյանը, հայ մարզիկների ելույթները Ռեյկյավիկում հուսադրող են, ուստի նրանք կարող են պայքարել 2012-ի Լոնդոնի ամառային օլիմպիադայի ուղեգրերի համար:

# Վիճակահանությունն անվանեց մրցակիցներին

Երեկ Շվեյցարիայի Նիոն քաղաքում կայացավ 2011/12-ի եվրոգավաթների վիճակահանությունը: Չեմպիոնների լիգայի որակավորման 2-րդ փուլում «Փյունիկի» մրցակիցը Չեխիայի չեմպիոն «Վիկտորիան» է, որը ներկայացնում է Պլզեն քաղաքը: Առաջին խաղում ըստ վիճակահանության «Փյունիկը մրցակցին կհյուրընկալի սեփական հարկի տակ: Առաջին հանդիպումները նախատեսվում են հունիսի 28-29-ին, պատասխան խաղերը՝ հուլիսի 5-6-ին:

Եվրոպայի լիգայի որակավորման 1-ին փուլում «Բանանցը» պետք է մրցի Վրաստանի Ռուսթավի քաղաքի «Մետալուրգի» հետ, իսկ «Ուլիսի» մրցակիցը կլինի հունգարական «Ֆերենցվարոշը»: Վիճակահանությամբ հունիսի 30-ին մեր երկու ակումբներն էլ դաշտի տեր են, սակայն քանի որ երկու թիմերն էլ հանդես են գալիս Երեւանում, ուստի շատ հնարավոր է, որ նրանցից մեկը խաղա մրցակցի դաշտում: Պատասխան խաղերը կկայանան հուլիսի 7-ին: Եթե «Բանանցին» հաջողվի հաղթահարել 1-ին փուլը, ապա հաջորդ փուլում կմրցի լեհական «Յագելոնիա» եւ ղազախական «Իրտիշ» թիմերի մրցավեճի հաղթողի հետ: Իսկ «Ուլիսի» հաջողության դեպքում հաջորդ փուլում մրցակիցը կլինի «Օլեսունն» (Նորվեգիա)-«Նիս» (Ուելս) թիմերի հաղթողը:

«Միկան» պայքարը կսկսի որակավորման 2-րդ փուլից՝ մրցելով նորվեգական «Վոլերենգայի» հետ: Առաջին խաղում «Միկան» դաշտի տերն է: Հանդիպումները կկայանան հուլիսի 14-ին եւ 21-ին:

Ընդհանուր առմամբ կարելի է փաստել, որ վիճակահանությունը բարեհաճ գտնվեց հայկական ակումբների հանդեպ: Մնում է, որ մեր թիմերն ըստ արժանվույն կարողանան հանդես գալ եվրոգավաթների մրցաշարում:

# Գեւորգ Հարությունյանն ընդգրկվեց առաջատարների խմբում



Վորոնեժում ընթացող շախմատի մրցաշարի հերթական 2 տուրերը շատ հաջող էին Գեւորգ Հարությունյանի համար: Հաղթելով Ալեքսանդր Ժուրիխինին եւ Ալեքսեյ Ալեքսանդրովին, Գեւորգը 7 տուրից հետո վաստակեց 5,5 միավոր եւ Անդրեյ Դեւյատկինի, Ալեքսանդր Ռախմանովի, Դմիտրի Կոկորեւի ու Եվգենի Շապոշնիկովի հետ գլխավորեց մրցաշարային աղյուսակը:

5 միավորով առաջատարների խմբին հետապնդում են Զավեն Անդրեասյանն ու ռուսաստանցի Արթուր Գաբրիելյանը: Զավենը հաշտություն կնքեց Գենադի Տունիկի հետ, ապա հաղթեց Սերգեյ Չեխովին: Արթուրը հաղթեց Անդրեյ Ժիգալկոյին, իսկ 7-րդ տուրում անդրանիկ պարտությունը կրեց Դմիտրի Կոկորեւից:

4-ական միավոր ունեն Լիլիթ Գալոյանն ու Գեւորգ Հայրապետյանը: Լիլիթը Միխայիլ Պանարինի եւ Արտյոմ Չեռնոբայի հետ պարտիաներն ավարտեց ոչ-ոքի: Իսկ ահա Գեւորգը երկու հաղթանակ տոնեց Ալեքսանդր Ժուրիխինի եւ Գենադի Պրանիզինի հետ մրցավեճում: 3,5 միավոր է վաստակել Նելլի Աղինյանը, որը նախ պարտվեց Գրիգորի Գուսարովին, ապա հաղթեց Վիկտոր Սոկոլովսկուն:

# Լիլիթ Մկրտչյանի հաջող մեկնարկը

Լիլիթ Մկրտչյանը հաջող է մեկնարկել Հունգարիայում անցկացվող Դյորդ Մարքսի հուշամրցաշարում: 6 շախմատիստուհիներ 2 շրջանով կվիճարկեն խաղարկվող մրցանակները: Անցկացված 3 տուրից հետո Լիլիթն ունի 2 միավոր եւ Ալինա Կաշլինսկայայի հետ գլխավորում է մրցաշարային աղյուսակը: Մեկնարկային տուրում Լիլիթը հաղթեց Իլդիկո Մադլին, այնուհետեւ հաշտություն կնքեց Աննա Ռուդոլֆի եւ Աննա Ցարեւիչի հետ: 4-րդ տուրում Մկրտչյանը կմրցի Էսթեր Դուդասի հետ, որը մեկ միավորով Մադլի հետ եզրափակում է աղյուսակը:

# Մովսիսյանը զիջեց Նավարային

Պրահայում ավարտվեց դասական շախմատի 6 պարտիայից բաղկացած մրցախաղը Սերգեյ Մովսիսյանի եւ Դավիթ Նավարայի միջեւ: Վճռորոշ եղավ 4-րդ պարտիան, որում հաղթելով, Դավիթ Նավարան 3,5-2,5 հաշվով շահեց մրցախաղը: Մնացած 5 պարտիաներում մրցակիցները հաշտություն կնքեցին:

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

## Ծովարշավ

# «Արմենիա»-ի հայտնագործությունը

*4-րդ էջից*

Ես ուշադրություն դարձրեցի, որ այդ բոլոր խոսակցություններին, գործողություններին, ժպտացող դեմքերին ուշիուշով հետեւում է ձեռնափայտ-հովանոցով, նոր կոստյումով մի տղամարդ: Երկար զննեց «Արմենիա»-ն: Մեր տղաներից ինչ-որ մեկին հարցուփորձ արեց, թե նավակողերին գրված այդ ամենի էությունը որն է: Ուշադիր լսում էր ու գլխով անում: Ապա դանդաղ, թեթեւակի կաղալով մոտեցավ մեզ: Ականջ դրեց խոսակցությանը: Նավահանգստի պետը խոստովանեց, որ իրեն դուր է գալիս նավը, որի վրա կա այբուբեն եւ սեփական դավանանքի խորհրդանիշը: Հռիփսիմեն շնորհակալություն հայտնեց եւ ասաց, որ խիստ զգացված է ինդոնեզիական մահմեդականների հանդուրժողականությունից: Եվ ահա այստեղ հանկարծ բարձր խոսեց նոր կոստյումով ու ձեռնափայտով, հանելուկային տղամարդը. «Ես լավ գիտեմ հայ ժողովրդի պատմությունը: Ձեր դժբախտությունն այն է, որ բոլոր մահմեդականներին խառնում եք թուրքերի հետ»: Ինձ շատ դուր եկավ, որ նա այդքան վստահ ու ինքնագոհ խոսեց մի այդպիսի կարեւոր ու լուրջ հարցի մասին: Եվ ես, ինչպես ասում են, սանձերը ձեռքս առա (Հռիփսիմեն հազիվ էր հասցնում թարգմանել). «Բանն էլ այն է, որ բոլորովին այդպես չենք մտածում: Հայ ժողովուրդն անսահման երախտապարտ է ողջ արաբական աշխարհին նրա համար, որ Թուրքիայում ցեղասպանության ենթարկվելուց անմիջապես հետո մենք ապաստան գտանք Մերձավոր Արեւելքի բոլոր երկրներում: Նույնը կարող ենք ասել եւ Միջին Ասիայի ու այլ տարածաշրջանների ժողովուրդների մասին: Ավելի քան չորս դար Հայ առաքելական եկեղեցին եւ մահմեդական մզկիթը հաշտ ու խաղաղ համագոյակցել են Իրանում: Այնպես որ, ով` ով, բայց հայը երբեք թուրքին չի նույնացրել մահմեդականի ընդհանրացված կերպարի հետ»:

...Մենք դեռ պետք է ահռելի քաղաքում գտնեինք հայկական եկեղեցին: Բայց առաջին օրը մենք Պետրոսի ու Հռիփսիմեի հետ չհասցրեցինք: Արեւադարձային գոտում, ըստ էության` հասարակածի մոտ, ժամը վեցին արդեն մութ է: Վաղ առավոտյան, դարձյալ Պետրոսի ու Հռիփսիմեի հետ ավտոմեքենայով այն շրջանում էինք, որի մասին մեզ տեղեկացրել էր մեր Մարթա մայրիկը Սիդնեյից: Օգնեցին Դավիդյանների Սուրաբայայում ապրող մոտիկ ծանոթները: Գտանք: Դա անհնար է նկարագրել: Ահա արդեն երկու ամիս ես մտովի փնտրում եմ այդ եկեղեցին, համոզված լինելով, որ անպայման կգտնենք: Չէ՞ որ տիկին Մարթան ընդամենը երկու տարի առաջ էր այնտեղ եղել:

Առաջինը խաչը տեսավ Պետրոսը: Նա բարձր գոռաց. «Հայկական խա՜չ»: Եվ այնպես, որ տաքսու վարորդը վախից թողեց ղեկը: Այդ խաչը հազիվ էր երեւում կողք-կողքի կանգնած երկու շենքերի նեղ արանքից: Իջանք մեքենայից: Բաց դարպասի միջով մտանք բակ: Այստեղ երեխաների մի մեծ խումբ խելագար վազվզոցի մեջ էր: Ամեն ինչից երեւում էր, որ դպրոց է: Երկու շենքերի արանքով ես առաջինը մտա կամարի տակ, առանց շուրջս նայելու: Ինձ հետեւում էին Պետրոսը եւ Հռիփսիմեն: Եվ հանկարծ գոռոց լսեցի: Դարձյալ Պետրոսն էր: Պատի վրա մարմարե երեք քար էր գտել` հայերեն արձանագրություններով: Ես խնդրեցի, որ դուռը բացեն: Մտանք ներս: Կաթոլիկական մեծ խաչ: Քսան շարք նստարաններ: Պատին նորից ճերմակ մարմարե հուշաքար էր` հայերեն գրությամբ: Բոլոր գրությունները ավարտվում էին 1927 թվագրությամբ: Ինչ-որ մեկն ասաց, որ «այս ամենի» տերը կաթոլիկ պաստորն է: Ես խնդրեցի, որպեսզի հրավիրեն նրան, իսկ ինքներս երեքով գնացինք նավահանգիստ` տղաներին բերելու:

Երեք մեքենաներով նորից վերադարձանք եկեղեցի: Ես ավելի շատ լռում էի: Չգիտեի ինչ էր կատարվում ինձ հետ: Մի կողմից, կարծես թե հասել էի ուզածիս, մյուս կողմից` մի ինչ-որ ամայություն էր լցվել հոգիս: Այսպիսի քանի՜-քանի հայկական եկեղեցիներ են առանց գմբեթների, այսպես որբացած թաքնված շենքերի արանքում: Այնինչ այս տեղում քարե եկեղեցու կառուցումից դեռ հարյուր տարի առաջ կանգնած էր փայտաշենը: Տիկին Մարթան պատմում էր, որ հայերն այստեղ հսկայական տարածք են ունեցել` բազմաթիվ շենքերով, որոնցից յուրաքանչյուրը կոնկրետ գործի էր ծառայում. դպրոց, թատրոն, մարզասրահ, պարասրահ, համերգային դահլիճ: Կորցնելով տունը հարազատ հողում, բնակություն հաստատեցին այս անհավատալի հեռվում, եւ այդ ամենն ավարտվեց նրանով, որ իննսունամյա կինը մեկ ուրիշ երկրից գա` հոր գերեզմանին ծաղիկներ դնելու համար:

Ես նայում էի, թե ինչպես են անձնակազմի անդամները լուռ դիտում ու դանդաղ, ինքնամփոփ ընթերցում գրությունները: Բաբասը եւ Հայկը այդ ամենը նկարահանում են, եւ շուտով բոլոր գրությունները կլինեն իմ սեղանին: Արդեն պատրաստվում էինք գնալ, երբ հանկարծ ասացին, թե պաստորը եկել է:

Մենք շտապում էինք: Որոշել էինք հենց նույն օրն էլ հեռանալ նավամատույցից եւ ուղղություն վերցնել դեպի Սինգապուր: Բայց չկարողացանք շտապել: Պարզվեց, որ պաստոր Ալեքս Լիմը ամենաբարի մի մարդ է: Ահա թե ինչ ասաց, ծանոթանալով մեր ծովարշավի խնդիրներին: Խոսքը ներկայացնում եմ այնպես, ինչպես որ սղագրել էի. «Ես այնպիսի տպավորություն ունեի, որ դուք ինչ-որ ժամանակ գալու եք այստեղ: Ամեն անգամ նայելով այս արձանագրություններին, անընդհատ միտք էի անում, թե ի՞նչ է այնտեղ գրված, եւ ովքե՞ր են այդ մարդիկ, որտեղի՞ց են: Ես նույնիսկ չգիտեի, թե ինչ լեզվով է գրված: Միայն երբ երկու տարի առաջ այստեղ եկավ մի ծեր կին, որը հազիվ էր տեղաշարժվում իր որդու օգնությամբ, ես իմացա, որ այս եկեղեցին հայկական է եղել:

Գիտեմ նաեւ, որ այստեղից մեկնած վերջին հայը, առանց գրպանում մի ցենտ իսկ ունենալու, պարզապես այն տվել է ինչ-որ մեկին: Իսկ արդեն նրանք եկեղեցին վաճառել են մի կաթոլիկ չինացու: Ես նույնպես չինացի եմ եւ նույնպես կաթոլիկ: Եվ ուզում եմ ձեզ նվիրել արխիվային թղթերը: Խոսքը հայկական հողային տիրույթների, եկեղեցու, ուրիշ շատ շենքերի գծագրերի մասին է: Ես կարծում եմ, դուք դրանց համար արժանի տեղ կգտնեք...»: Պաստոր Ալեքս Լիմը ինչ-որ տեղ զանգեց, ինչ-որ բան հայտնեց ինդոնեզերեն եւ շրջվելով մեր կողմ, ասաց, որ երկու ժամից թղթերը կբերեն: Խոստացավ, որ անձամբ դրանք նավ կհասցնի: Եվ առաջարկեց մեկտեղ էլ օրհնել մեր մեկնումը:

Արդեն մթնում էր: Ափային պահակախումբը չէր կարող գնալ, քանի դեռ չէինք հեռացել: Պաստոր Լիմն ուշանում էր: Մեզանից ոչ մեկը կասկած չուներ, որ նա անպայման կգա:

Նավում մենք երկար զննում էինք այդ անգին թղթերը, այդ գծագրերը, որոնք, ամեն ինչից երեւում էր, արված էին մասնագետ ձեռքով: Պաստոր Լիմի հետ լուսանկարվեցինք նավի վրա: Եվ աղոթելով, նա` կաթոլիկ քահանան օրհնեց մեր ուղին մինչեւ Սինգապուր: Ես չգիտեմ, որքանով է դա ընդունելի մեր Հայ առաքելական եկեղեցու կողմից, բայց եթե մենք սխալ ենք վարվել, ապա կարծում եմ, մեզ կների մեր Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդը: Չգիտեմ եկեղեցական կանոններով ինչպես, բայց ամեն ինչ սրտալի էր եւ նույնիսկ շատ մարդկային:

**ԶՈՐԻ ԲԱԼԱՅԱՆ**
**«Արմենիա» առագաստանավ,**
**Հնդկական օվկիանոս**

# Announcement

1. Fundamental Scientific Library o the National Academy of Sciences of Armenia (hereinafter called the '**Beneficiary**'), within the framework of a NATO NIG grant organises an open price quotation for the procurement of robotic high speed book scanning equipment (hereinafter as the '**Hardware**'), with following technical specifications and additional requirements:

| ## | Name | Minimal technical requirements | Q-ty |
|---|---|---|---|
| 1 | Optic system: Canon DSLR system with 28mm fixed focal width | | 1 |
| 2 | Page turning system: Mechanical page separation, without use of vacuum. Double page control based on light sensor | Operation modes: Manual, Semi - automatic, Fully automatic<br>Pages per hour: minimum 2000 pages / hour | 1 |
| 3 | Book cradle | aperture angle: minimum 80 degrees | 1 |
| 4 | Glass plate system to flatten and hold down book pages | | 1 |

Additional requirements:

a) page turning security system allowing secure page separation and automated single turning

b) supported formats: JPEG, PDF, TIFF, GIF, RAW, PDF OCR, XML

c) image resolution: 300 dpi

d) colour tone: 24-bit colour, 8-bit greyscale, 1-bit b/w

2. The Beneficiary hereby invites direct providers of Hardware to submit their price-quotations for the delivery of the Hardware until 18 July 2011, 15:00 Yerevan time.

3. The present price quotation is opened to Armenian and foreign companies registered and licensed in book scanning business.

4. Requests in 2 copies signed by organisation head, in sealed envelopes must be delivered to the address: 0019, Republic of Armenia, Yerevan, Bagramyan avenue 24d. Fundamental Scientific Library. Attn.: Tigran Zargaryan.

5. As a NATO funded project and according to the Common Framework Agreement please indicate the prices as CIP Yerevan.

6. Please indicate delivery dates and payment methods.

7. Please indicate suggested warranty services time for each device, and warranty service policy.

8. The following documents must be included in the Offer:

- copy of state registration document attested notarially (for companies registered in RA - the copy of State Register Certificate; for foreign companies - the copy of document provided by an authority body of the country);
- company profile for last 3 years;
- Price offer.

9. Fundamental Scientific Library is not responsible for charges for price quotation preparation and postage.

10. Proposals must be in English.

11. Prices must be in EURO.

12. Fundamental Scientific Library may reject any or all price quotations.

13. Closing date for price-quotations is: 18 July 2011, 15:00 Yerevan time. Late quotations will be rejected.

14. Organisations that choose to attend opening of quotations, may be present at the address: 0019, Republic of Armenia, Yerevan, Bagramyan avenue 24d. Fundamental Scientific Library. 6th floor, at 15:00 hour (Yerevan time), 18 July 2011. Phone: (+37410) 524750.

e-mail: tigran@flib.sci.am

# Պարենի եւ Գյուղատնտեսության Կազմակերպությունը եւ համաշխարհային սննդի անվտանգության խթանումը

Սույն հոդվածը ուղղված է բոլոր նրանց, ովքեր ցանկանում են օժանդակել աշխարհում քաղցի դեմ պայքարի գործընթացին: Ես որոշեցի գրել այն` ի աջակցություն ՄԱԿ-ի Պարենի եւ Գյուղատնտեսության Կազմակերպության (FAO-ի) Գլխավոր Ղեկավարի պաշտոնում իմ ընկեր Ժոզե Գրազիանո դա Սիլվայի թեկնածությանը:

Դեռեւս շատ անելիք կա համաշխարհային սննդի անվտանգությունն ապահովելու համար: Դա անհրաժեշտաբար ներառելու է բարեփոխել եւ ամրապնդել FAO-ն` միավորելով սոցիալապես համախմբող եւ բնապահպանորեն կայուն գյուղատնտեսական գործնական միջոցառումները, հատկապես ընտանեկան գյուղատնտեսությունը: Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է ընդլայնել ազգային որոշումներ կայացնողների դերը եւ երաշխավորել ապակենտրոնացված կառավարում` այդ գործընթացում թույլատրելով այլ պետությունների, հատկապես զարգացող երկրների մասնակցությունը:

Գրազիանոն արդեն ցուցաբերել է այդ առաջադրանքը իրագործելու կատարյալ ունակություն: Որպես FAO-ի Գլխավոր Ղեկավարի օգնական եւ Լատինական Ամերիկայի Տարածաշրջանային ներկայացուցիչ, նա ղեկավարել է «Լատինական Ամերիկան եւ Կարիբյան տարածաշրջանը առանց քաղցի» նախաձեռնությունը, որի միջոցով այդ տարածաշրջանի պետությունները առաջինն էին աշխարհում, որոնք հանձն առան վերացնել քաղցը մինչեւ 2025 թ.: Նա նաեւ գլխավոր դեր է ունեցել FAO-ի կենտրոնական համակարգման գործընթացում, ՄԱԿ-ի համակարգի այնպիսի գործակալություններում, ինչպիսիք են UNDP-ն, ECLAC-ն ու ILO-ն, եւ միջազգային կազմակերպություններում, ինչպիսիք են IICA-ն եւ OAS-ը: Գրազիանոյի կարիերան առանձնանում է գյուղերի զարգացմանը եւ քաղցի դեմ պայքարին ուղղված գործողություններով: Օրինակները ներառում են 2003թ.-ին Բրազիլիայում իրականացված քաղցի եւ թերսնման դեմ պայքարի հաջողված քաղաքականությունները: Գրազիանոն էր, ով համակարգեց Զրոյական Քաղց Ծրագրի ստեղծումը, որը 24 միլիոն բրազիլացիների հնարավորություն տվեց հինգ տարվա ընթացքում դուրս գալ աղքատությունից եւ Բրազիլիայում 25%-ով նվազեցրեց թերսնումը` օգտագործելով Բրազիլիայի ՀՆԱ-ի միայն 0.5 %-ը:

Հարկ է նշել, որ Պարենի եւ Գյուղատնտեսության Կազմակերպության ստեղծման հիմնական նպատակը աշխարհում սննդի անվտանգության ապահովումն էր: Չնայած բազմաթիվ ջանքերին եւ առաջխաղացմանը, այս նպատակը դեռեւս իրականացված չէ: FAO-ի ստեղծումից վեց տարի է անցել, բայց աշխարհի բնակչության 7-ից մեկը դեռեւս սննդով ապահովված չէ:

Սա է հիմնական պատճառը, որ Պարենի եւ Գյուղատնտեսության Կազմակերպությունը պետք է հաղթահարի աշխարհում քաղցի ամբողջովին վերացումը` արդյունավետ գործողությունների միջոցով ներդրումներ կատարելով գյուղական կայուն զարգացմանը նպատակաուղղված ռեսուրսներում եւ խթանելով Հարավ-Հարավ համագործակցությունը, ինչպես նաեւ ազգերի միջեւ փոխհամագործակցության եւ սատար կանգնելու միջոցով: Անհրաժեշտ է զարգացնել ընտանեկան գյուղատնտեսությունը եւ գյուղատնտեսներին գյուղերում պահելուն ուղղված պետական քաղաքականությունը` բարելավելով արտադրական ենթակառուցվածքները, ստեղծելով վարկային նպաստավոր պայմաններ, ապահովելով տեխնիկական աջակցություն եւ պայմանների ընդլայնում գյուղական շրջաններում ապրանքներ արտադրելու ու իրացնելու ուղղությամբ: Անհրաժեշտ եւ հրատապ է կարեւորել փոքր ֆերմերների դերը, որպես կենսաբազմազանությունը պահողների, եւ գյուղական լանդշաֆտների ու սննդի անվտանգության ամբողջականությունը: Այս գործնական միջոցառումները պետք է զուգորդվեն միջազգային համագործակցության զարգացումով, մասնավորապես համանման կենսադաշտ ունեցող երկրների միջեւ:

Սա է այն ճանապարհը, որը կապահովի աշխարհի բնակչությանը (որը դարի կեսերին կհասնի ինը միլիարդի) առողջարար սնունդ մատակարարելու օրեցօր աճող անհրաժեշտությունը:

Լինելով արհեստավարժ մասնագետ եւ գիտնական` Գրազիանո դա Սիլվան տիրապետում է այս մարտահրավերը հաղթահարելու բոլոր անհրաժեշտ հմտություններին:

Իգնասի Սաշսը Փարիզի «Հասարակական գիտությունների գծով բարձրագույն ուսումնասիրությունների» դպրոցի պատվավոր տնօրենն է:

**Վաճառվում է Volkswagen Jetta**
**մակնիշի ավտոմեքենա, արծաթափայլ, արտ. 2000 թ., վաճ. 2001 թ., շարժիչը 2 լ., փոխանց. տուփը ավտոմատ, սրահը կաշվեպատ, դիմացի նստատեղերը տաքացվող, հայելիները եւ լյուկը էլեկտր., ապակիները (մգեցված), ունի կոնդիցիոներ: Գերազանց վիճակ: 095 02 66 19:**

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ` 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող` «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համար` 02 Ա N 047261, տրուած` 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ` 3000, ստորագրուած է տպագրութեան` 20.6.2011, գինը` 100 դրամ, տպագրուած է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում` Իսահակեան 28: